№ 1 VI ՏԱՐԻ 5 ՅՈՒՆԻՍ 1897

"Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
Rédaction du "Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Հ.Յ.Դ. ԲՅՈՒՐՈ
ԳՐԱԴԱՐԱՆ
H.R.F. BURO
LIBRARY

ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ԿՌԻՒ ԲԱՍԷՆՈՒՄ

Դեկտեմբերի սկզբներին Բասէնում կռիւ է տեղի ունեցաւ Դաշնակցական հայդուկային խմբի եւ սահմանապահ զինուորների ու քրդերի մէջ։ Կռիւը տեւում է 4 ժամ եւ լինում է շատ յաջող մերոնց համար։

Տեղի ունեցած երկրորդ ընդհարման ժամանակ մեր ընկերներից ընկնում է մէկը սպանուած, իսկ զինուորների ու քրդերի կողմից՝ 5 սպանուած եւ 8-10 վիրաւոր։

1896-97

Մահու գարշուրելի հրեշտակը իր թեւերը տարածել էր ամբողջ Հայաստանի վրայ։ Հրի ու սրի բաժին դարձած մեր հայրենիքի աւերակները դեռ մխում էին և իրենց սև ծխով աւելի սեւացնում Հայաստանի մահագուշակ բաւար երկինքը։ Հարիւր հազար սրախող-խող անմեղ հայերի դիակները մնացել էին ցիրուցան և վրէ՛ժ էին մրմնջում։ Ձիւնի հաստ սաւանն էր այդ պատառոտուած դիակները պահում գիշատիչ գազանների աչքերից։

Հազարաւոր սգաւոր մայրերի ու քոյրերի, կանանց և որդկերանց սրտերը կսկծում էին և անիծում անդութ մարդկութիւնը։ Երկրի ամենահեռու անկիւններից լսւում էր սոված, որբ ու անտէր մնացած՝ թափառական հայ կանանց, մանուկների ու ծերերի սրտաճմլիկ հառաչանքը։

Դիպլոմատիայից, իրենից և իր դարերով պաշտած Աստուծուց յոյսը կտրած հայի սրտում թագաւորում էր յուսահատութիւն և հիասթափում։

Նոյն իսկ ժողովրդի պաշտօնական ամենակորովի ղեկավարները շւարել էին հայկական այս սարսափելի ճրագնաժամում և սգում էին ամբողջ ազգի կորուստը։ Միայն առիւծ զէյթունցու հսկայական կռիւը փոքր ինչ սփոփում էր հայ ժողովրդի սիրտը։

Ահա այս վիճակում հայը դիմաւորեց 96 թուականը։ Նոր տարին ոչ նոր յոյս և ոչ նոր կեանք էր խոստանում տարաբախտ հային։

Հայի „պաշտպան" լիրբ դիպլոմատները շփում էին իրենց ձեռքերը, որ անուղղակի կերպով թաթախուած էին հայի արեան մէջ, և իրենց կրծքերը զարդարում աշխարհիս ամենագազան թագաւոր՝ սուլթանի շքանշաններով։

Բայց սուլթանը դեռ չէր կշտացել հայի արիւնով. նա զգում էր, որ Վասպուրականը, այդ հայաշատ նահանգը, ընկճած չէ. նա տեսնում էր, որ հայութեան սիրտը՝ շնորհիւ իր յեղափոխական ուժի, անձեռնմխելի է մնացել և տեղական վարչութիւնը չի համարձակւում փոքրիկ ուժով յարձակւել Վանի վրայ։

Բայց պէտք էր հրեշ Լօբանովի ծրագիրը ամբողջովին իրագործել։ Վանի նահանգապետը սկսեց պատրաստւել. պատրաստւում էր և Վանը, որը աշնանը մի քանի յեղափոխական գործեր էր կատարել, չնայելով, որ ամբողջ Հայաստանը դողում էր դահճի սրից։

Վերջապէս յունիսի 15-ին մի հասարակ պատճառով պայթեց Վանայ կռիւը։ Հայ յեղափոխական տարրը հերոսաբար վեց օր կռիւ մղեց կառավարութեան զօրքերի դէմ և միայն մեր կեղծ պաշտպան Անգլիայի Ոստիկան-կոնսուլի ծուղակն ընկնելով՝ քաղաքից հեռացաւ։ Կրկին շողաց տաճկական սուրը...

Քաղաքից հեռացած յեղափոխականները հանդիպեցին կառավարութեան զօրքերին և քրդերին, կրկին կռիւն սկսւեց և այս անգամ փոքրաթիւ յեղափոխականները կրկնապատիկ զօրք ջարդելով, մինչև վերջին մարդը հերոսաբար ընկան կռւի դաշտում։ Նրանց հետ մեռաւ և Վասպուրականի պահպան հրեշտակը, պաշտելի Պետոն։

Անվախ ու անձնուէր հերոսներից ազատուած տաճիկն ու քիւրդը կրկին քաջացան և մինչև այժմ անմերձենալի Վասպուրականը հրի ու սրի բաժին դարձրին։

Առիւծ զէյթունցիների անձնատուր լինելը, Վասպուրականի կոտորածը, Անգլիական կոնսուլի կատարած ստոր դերը շւարեցրին մնացած փոքր ի շատէ լաւատես հային էլ։

Հայ ժողովրդի վիճակը օրհասական էր, և ըստ երևոյթին. յուսահատութիւնը ընդհանուր։ Ոչ մի տեղից

ոչ մի յոյս. երկիրը աւերակ, բանտերը լիքը անմեղ հայերով, դիպլոմատիան աւելի քարասիրտ և ստոր. ինչ մեր արիւնարբու թշնամին՝ սուլթանը կարծես աւելի զօրեղ։ Այնքան զօրեղ, որ համարձակւեց գրեթէ անմեղ հայ կտրիչներին օրը ցերեկով կախաղան բարձրացնել Եւրոպայի ստոր ներկայացուցիչների աչքերի առջև. մի քայլ, որ դեռ երբէք չէր արել։

Ժողովրդի սիրած հովիւը, նրա հաւատը վայելող միակ բարձր հայ պաշտօնեան, հայութեան բողոքի պաշտօնական թարգմանը աքսորւեց և ոչ ոք չկարողացաւ սուլթանին արգելել այդ քայլն անելուց։

Բոպէն ճակատագրական էր և վտանգաւոր, հայ ժողովրդի յուսահատութեանը յաջորդում էր կորստաբեր ըէակցիան։

„Դաշնակցութիւնը" զգաց ճակատագրական վայրկեանի նշանակութիւնը, հասկացաւ ըէակցիայի մահաբեր լինելը և վճռեց մի զօրեղ հարւածով ցնցել հայ ժողովրդին և չթողնել նրան, որ մեռելութեան ենթարկւի։

Հարւածը պիտի լինէր զօրեղ, սարսափ ազդող թէ սուլթանին, թէ Եւրոպային. նա պէտք է ցնցէր ըէակցիայի գիրկը փարող հայ ժողովրդին և նոր կեանք, նոր յոյս ու նոր հոգի ներշնչէր նրա մէջ։

Դաշնակցականներս շատ լաւ զգում էինք մեր ջախջախւած ժողովրդի զարհուրելի դրութիւնը. մեր սիրտն էլ այրւում էր, բայց մենք պարտաւոր էինք մի յանդուգն քայլ անել, թէկուզ կրկին մեծ զոհեր տալով, միայն թէ ամբողջ ազգը յետ կանգնեցնէինք կորստաբեր ըէակցիայից, յաւիտենական մեռելութիւնից։

Եւ ահա օգոստոսի 14-ին, Պոլսում, փադիշահների ժայրաքաղաքում, հմուտ դիպլոմատների ամենանշանաւոր կրկէսում որոտաց հայ յեղափոխականի ռումբը։

Հարւածը անսպասելի էր. ջարդ ու փշուր եղած հայը իր գլուխը բարձրացրեց աւելի զօրեղ և աւելի հմուտ կերպով։ Եւրոպական մամուլը հիացաւ այդ յեղափոխական „եզակի" ձեռնարկով։ Մայրաքաղաքը մի շաբաթ անիշխանութեան մատնւեց, սուլթանը փրփրեց, բայց անկարող եղաւ իր սրտի ուղած վրէժը առնել հայերից։

Հայութեան վրայ խաչ դնող դիպլոմատները նախ շշմեցին, և ապա գժւածի նման իրար ընկան և աւելի տաք կերպով ձեռք առան Հայկական հարցը։

Ցուցւեց ամբողջ լուսաւոր մարդկութիւնը և հայ յեղափոխական վիշապից արդէն վախեցած դիպլոմատներից պահանջեց բաւականութիւն տալ հային։

Կորստաբեր ըէակցիան կանգ առաւ։ Պոլսի փառաւոր կռիւը արձագանք տւեց հայ ժողովրդի սրտում, դեռ յունիսի կոտորածի սարսափահար յիշատակները չմոռացած Վանը սեպտեմբերին գլուխը բարձրացրեց։ Տեղական յեղափոխական տարրը օրինակելի հերոսութիւններ արաւ և սուլթանի զօրավարներին ու զինուորներին պատերազմական դասեր տւեց։

Ցնցւեց և „երիտասարդ Թիւրքիան" հայի հսկայական շարժումից ու կորովից, զգաց՝ թէ ինչ վտանգ է սպառնում ընդհանուր հայրենիքին՝ վատ վարչութեան պատճառով։ Նա ըստ երևոյթին աւելի կենդանացաւ և կարծես պատրաստւում է գործնական կերպով ցոյց տալ իր գոյութիւնը իր ատած փադիշահին։

Այս բոլոր երևոյթները սուլթանին զգացրին, որ այնքան էլ հեշտ չէ հային ջնջել, որ կատաղած հայը շատ բանի ընդունակ է։

Սուլթանը կրկին հագաւ ծէր աղէսի դիմակը և սկսեց պոչը խաղացնել։

Զո՞ւր ջանք։

Մենք չենք հաւատում՝ ոչ սուլթանին և ոչ դիպլոմատիային։

Մե՛նք՝ հայերս, 96 թիւը վերջացնում ենք աւելի ուրախ, քան սկսել ենք։

Աւելի մեծ հաւատով ենք դիմաւորում 97 թւականը։ Մենք ուշադրութիւն չենք դարձնում և իրենց խելքը ու աւելի փափկասիրտ կարծող հայերի բարբանջանքների վրայ և բացարձակ կերպով յայտարարում ենք, որ միշտ պէտք է կուենք։

Մեր խիղճը հանգիստ է, որովհետև համոզւած ենք, որ հայի փրկութեան միակ միջոցը յեղափոխութիւնն է։

Մենք համոզւած ենք, որ այդ սուրբ կռիւը մեզնից պահանջում է ընդհանուր մարդկութիւնը, որի արժանաւոր անդամ լինել կարող է միայն ազատ հայը։

Հաւատացած ենք, որ այդ սուրբ մարտը մեզնից պահանջում է մեր ստրուկ ժողովուրդը, մեր աւերակ հայրենիքը և մեր հարիւր հազար նահատակների սուրբ յիշատակը։

Նոր տարին սկսում ենք գոչելով՝

Կռի՛ւ, կռի՛ւ և աւելի ահեղ կռի՛ւ։

ՀԱՅԴՈՒԿՆԵՐ

—

Ծանր են տաճկահայ ժողովրդի այս տարւայ ընթացքում կրած տանջանքները։ Հեռու քաղաքակրթւած աշխարհի աչքերից, ներքին նահանգներում շղթայւած դժբախտների դրութիւնը յուսահատական է թւում։

Բայց երբ արիւնլայ աւերակների մռայլ խորքերում մենք տեսնում ենք վրէժով վառւած, հայրենիքի վերքերով խոցւած հայդուկային խմբերի շարքերը, երբ յուսահատական ճիչերի, լաց ու կոծի միջից լսւում են յեղափոխականների ահեղ գոչիւնները, երբ Մայր-Հայրենիքից փախչող թուլամորթների փոխանակ՝ երկիր են մտնում երիտասարդ կորովի ուժեր՝ ոտից գլուխ զինւած, երբ վերջապէս լքացածների ստրկական աղեր-

սանքների հետ միասին որոտում են կուռող անձնուէրների խրոխտ պատերազմական երգերն ու ընկած նահատակների „կեցցէ՛ Հայաստան“ վերջին դոչերը... ամենքի համար արևի պէս պարզ պէտք է լինի, որ հայ ժողովուրդը հարուածներ է կրել, բայց չի ընկճուել, վիրաւորուել է, բայց չի ընկել։

Այս տն թելադրում մեզ ներկայ համարի մէջ յիշատակուած Բասէնի փայլուն կռիւները, ուր Թուվ անհամեմատ շատ թշնամին կրեց խայտառակ պարտութիւն և մանաւանդ Վասպուրականի հերոսական ճակատամարտերը, որոնք ահագին նշանակութիւն ունեցան հայ ժողովրդի և իր թշնամիների փոխադարձ յարաբերութեանց մէջ։

Վանայ հռչակաւոր կռւից և Վասպուրականի աւերումից յետոյ կառավարութիւնը դեռ նոր էր պատրաստւում հանգիստ կերպով նստել ժողովրդի գլխին ու իր ճանկերը խրել նրա մարմնի մէջ, երբ յանկարծ դաշնակցական նոր տէրրօրը և հայդուկային նոր գնդերի անսպասելի երևան գալը խռովեց նորից Զարենորգիէ Ղաքիրի սևացած հոգին։

Ղաքիրն այս անգամ էլ յոյս ունէր խարդախութեամբ վերջացնել յեղափոխականների հետ. նոր կոտորածի սպառնալիքով նա ձգտում էր ազգաբնակութիւնը բարձրացնել նրանց դէմ և ռուսաց հիւպատոսի միջոցով հրաւիրում անձնատուր լինել, խոստանալով կեանքի ապահովութիւն։ Բայց Պետրի և միւս ընկերների կսկիծը սրտերին յեղափոխականները չէին կարող կատաղաբար չմերժել որևէ բանակցութիւն։ Նրանք փառաւոր ապտակ հասցրին ռուսաց կայսրութեան ներկայացուցչին և ամենայն սառնասրտութեամբ պատրաստուեցան փառաւոր կռւի, շշափերի կերպով ցոյց տալով, թէ անձնական կեանքի ապահովութի՛ւնը չէ յեղափոխական դրօշակը բարձրացնողի փնտրածը։

Ղաքիրին չօգնեց՝ ոչ իր սպառնալիքը, ոչ ռուսաց դիպլոմատիան և ոչ անգլիական հիւպատոսի ռազմագիտական ջանքերը։ Այս բոլորը խորտակուեց այն հըսկայական ուժի առաջ, որ կոչւում է ա ն ձ ն ա զ ո հ ութ ի ւ ն։ Երկու օրւայ հերոսական կռւից յետոյ միայն մեր ընկերները թողին քաղաքը, ջարդելով թշնամուն և տալով ընդամենը մէկ զոհ։

Այս մեծ կռւի, ինչպէս նաև Հայոց-Զորում ու Ախոռկայում տեղի ունեցած սպարտական ճակատամարտերի անսպասելի յաջողութեան շնորհիւ՝ առաջացած վասպուրականցու ոգևորութիւնն ու մեր թշնամիների բարոյական լքումը և համաճարակ կոտորածների ժամանակ՝ քրդերի վոհմակներին ազդու դասեր տուող բասէնցիների ներկայ վստահ քայլերը պէտք է ամենալաւ ուղղեցոյցը լինեն քեզ համար, հայ ժողովո՛ւրդ։

Ոյժ տո՛ւր այդ խմբերին, թող տարածո՛ւի երկրի բոլոր խորքերում։ Դրանք են, որ վառ պիտի պահեն քո ազատութեան յոյսը։ դրանք են, որ իրենց մշտական ու անսպասելի հարուածներով պիտի շշկլացնեն թշնամուդ և թոյլ չտան, որ նա՝ ոչ մի ընդդիմադրութիւն չտեսնելով քո կողմից, լրբանայ և չոքի վերաւոր կրծքիդ վրայ։

Երբ կառավարութիւնը՝ ձեռքերը թուլացած՝ այլևս ոչ մի ջանք գործ չի դնում Կօմիտաս քահանային սատկեցնող տէրրօրիստին փնտրելու, երբ չարաչար ջարդուած զինուորները խոյս են տալիս հայդուկներին հանդիպելուց. երբ հայ „դաչաղների“ վրայ յարձակում գործելու համար՝ հարիւրաւոր մղոններ կտրող քիւրդը այսօր քիթը չի համարձակւում դուրս հանել, երբ նոյն այդ դաչաղները անցնում են իր գիւղի միջով. երբ գոռոզ, դարերի ընթացքում հայերի վրայ արհամարհանքով նայող քրդերը խմբերով քաղաք են թափւում և շլենքները ծռած՝ կառավարութիւնից օգնութիւն աղերսում „ֆլահների“ դէմ... ամենայն համարձակութեամբ գոչում ենք քեզ, հայ ժողովո՛ւրդ, մի՛ վհատիր, ապագան քոնն է։ Լաւ տես՝ և համոզո՛ւիր վերջնականապէս, որ զէնքի մէջ է քո փրկութիւնը, որ քո „սարսափելի“ թշնամին սարսափելի է... երբ գործ ունի անզէնների, ծերերի, մանուկների, կանանց, կամ կանացի սիրտ ունեցողների հետ։

Զոհեր շատ ես տուել ժողովո՛ւրդ, բայց թշնամիդ է լքածը, քոնն է բարոյական յաղթութիւնը, և սա է քո երջանիկ ապագայի հաստատ առհաւատչեան։

ԴԱԾՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ԽՄԲԻ ԿՌԻՒԸ
ՀԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ

—

Մութն ընկաւ, որոտագոչ թնդանօթների բոմբիւնները ու մարտիկների միահամուռ զալպերի թնդիւնները դադարեցին Այգեստանը դղրդեցնելուց։ Կռիւը վերջացած էր և մենք, կամայ ակամայ, պէտք է թողնէինք Վանը։ Երեք հոգի տեղացի վերցնելով մեզ հետ, երեկոյեան ժամը 1-ին ըստ տաճկական, ելանք այգիներից։ Նախ քան ելնելը՝ մի մարդ ուղարկեցինք, իմանալու համար, թէ ո՛ւր մնաց Վարդանը իր խմբով. լրաբերը եկաւ, յայտնելով, որ քաղաքից քիչ առաջ մի խումբ է դուրս եկած, սակայն յայտնի չէ, Վարդանի՞ առաջնորդութեամբ, թէ ուրիշի։ Երկար մտածելն աւելորդ էր. հարկաւոր էր շտապել դեռ ևս ցերեկով. կռւի ժամանակ պայմանաւորուած էինք երեկոյեան ելնել Այգեստանից և միանալ միմեանց հետ Հայոց-Զորում, Կէմ գիւղի սարում։ Ուղեցոյցն առաջ ընկաւ, մենք հետևեցինք նրան։ Ս. Խաչ վանքի ճանապարհին նկատեցինք թարմ և շատ ոտնահետեր. այդ արդէն ապացոյց էր, որ մեր միւս խումբն այդ տեղով անցել է և բոլորս

էլ յուսացինք, որ գիշերը նրանց հետ կը լինինք։

Մինչդեռ մենք լուռ ու մունջ քայլելով՝ այդ յոյսերն էինք որոճում մեր մտքերում, յանկարծ մի անակընկալ դէպք պատահեց, որ մեզ ընդմիշտ խանգարեց միանալու Վարդանի խմբի հետ, Հայոց-Զորում։ Մեր դէմուդէմից, մթութեան մէջ ինչ որ սև կէտեր երևացին. նախ քան իմանալու, թէ ովքեր են դրանք, տղաներից մէկը հրացանն ուղղեց նրանց և արձակեց. այդ մի գնդակը մեր ամբողջ ծրագիրը քանդեց. մեքենայաբար մեզանից իւրաքանչիւրը պարտք համարեց մի գընդակ հասցնել սև կէտերին. և ուրիշ կերպ էլ չէր կարելի, որովհետև նրանք արդէն սկսել էին օգնութիւն դուռալով՝ փախչել դէպի մօտակայ գիւղերը։ Պարզւեց, որ երկու հոգի էին, որոնցից մէկը բարձրաստիճան պաշտօնեայի էր նմանում. այդ յայտնի էր նրա թողած վերարկուի նշաններից. նրանք եղներով ալիւր էին տանում Վան։ Մեր արածը ներկայ պայմաններում ահագին սխալ էր. ամենքս էլ այդ զգացինք և մնացինք տեղերնիս կանգնած։ Այդ միջոցին ուղղեցոյցն առաջ եկաւ և ասաց, որ նոյն ճանապարհով գնալն այլ ևս անկարելի է, որովհետև փախչողները շուտով կը հասնին գիւղերը, կը յայտնեն եղելութիւնն այնտեղ պահապան դրուած բաւականաչափ զինուորներին և նրանք ճանապարհը փակելով՝ մեզ աւելի կը շեղեն մեր նպատակից։ Ուստի պէտք էր փոխանակ հարաւ-արևմուտք գնալու, ծուէինք արևելք, սեպտեմբերի 12-ը Նոր-Գեղի դիմացի լերան վրայ անցկացնելու։

Լուսադիմին մենք մեր դիրքերում նստած էինք։ Ամբողջ օրը անցկացրինք անհաց և անջուր. անհաց, որովհետև չնայելով մեր բոլոր ջանքերին՝ նախընթաց օրը քաղաքից հաց հանել և վերցնելն անկարելի էր եղել. անջուր, որովհետև մեր չորս կողմը վխտում էին հովիւներն ու արտուրները, և մենք ջուր բերելու համար պէտք է իջնէինք առուի վրայ, որտեղ իսկոյն կը նկատուէինք, իսկ այդ այնքան էլ ախորժելի չէր մեզ համար։ Կարող էր դէպք պատահել և մենք սոված փորով բացի այն, որ ամբողջ ցերեկը պէտք է կռուէինք, գիշերն էլ պէտք է փոխէինք տեղերնիս մի այնպիսի տեղ, ուր այդ ցերեկը ևս հացի համ չպէտք է տեսնէինք։ Շուտ մթնեցնելու համար պառկեցինք քնելու, եթէ կարելի էր քնել այդպիսի լարուած դրութեան մէջ. մանաւանդ որ երկինքն էլ այնքան հաշտ աչքով չէր նայում մեզ. անձրևի մանր կաթիլները լրացնում էին մեր դրութեան անկարելիութիւնը։ Վերջապէս՝ ամպերի տակից արեգակի հազիւ մի քանի հատ երևացող ճառագայթներն իջան սարի յետևը։ Մէջքերնիս կապելով դատարկ տոպրակներս, հրացանները վերցրինք և իջանք դիրքերից դէպի դաշտը։ Այս անգամ արդէն ինչ որ լինէր, չլինէր, պէտք է մեզ կէմայ սարը հասցնէինք՝ մերոնց հետ միանալու, եթէ միայն նրանք սպասում էին մեզ։ Թէև ճանապարհը դաշտի միջով էր անցնում, այնուամենայնիւ, գիւղերի մօտից անցնելուց, բաւական նեղութիւն էինք կրում, ահագին շրջաններ կազմելով. իսկ դրա պատճառը լինում էին հայ գիւղերի քիւրդ „նօքադարները“ (պահապան). շները հեռուից իմանում էին մեր մօտենալը և հաչելով՝ իմաց տալիս քիւրդ-շներին, նրանք էլ հարայ-հրոցը ձգում էին և մեզ շեղում մեր ուղղութիւնից։

Այդ բոլորը դեռ կարելի էր տանել. բայց երբ վրայ հասաւ տեղատարափ արձրևը, այլևս... դրանից վատ դրութիւն երևակայել անհնարին էր։ Սոված, յոգնած, մինչև ոսկորնիս թրջուած, չգիտէինք՝ ի՞նչ անել. ցեխն ամենայն առատութեամբ կպչում էր մեր առանց այն էլ ծանրացած ոտներին, և դժուարացնում՝ քայլելը։ Շուտ քայլել չէինք կարող, իսկ ծանր գնալն էլ այն նշանաւոր պակասութիւնն ունէր, որ մրսում էինք սարսափելի կերպով, ի՞նչ անէինք արդեօք։ Կէմ գիւղը մօտ էր. ինչ էլ որ լինէր, վճռեցինք մտնել մի մարագ, չորացնել շորերնիս, ցերեկով հաց բերել տալ գիւղից և գնալ ուղիղ դէպի Շատախ, ենթադրելով, որ Վարդանի խումբը ևս մեզ սպասելուց յետոյ, անցած կը լինի դէպի այն կողմը, ըստ մեր ծրագրի, որ կազմուած էր Այգեստանում, նախ քան կառավարութեան հետ ընդհարում ունենալը։

Մտանք մարագներից մէկը, բայց տեղն անյարմար լինելով՝ մի երկու ժամից յետոյ տեղափոխուեցանք մի ուրիշ մարագ, դարմանը յետ-յետ արինք, մտանք մէջն ու աշխատեցինք քնել Լոյսին քիչ էր մնացել. հազիւ աղօթարանը բացուել էր, որ մի կին եկաւ դէպի մարագը, նա դուռը բացաւ, ներս մտաւ, և յանկարծ մեզ տեսնելով՝ մնաց զարմացած, տեղը կանգնած։ „Ամա՛ն դուրս եկէք,—վերջապէս ձայն հանեց նա,—դուրս եկէք, ես ձեր բախտ, տունս կը քանդէք“։ Շատ աշխատեցինք նրան հանգստացնել, չը յաջողուեց. յայտնեցինք, որ սոված ենք, հաց բերէ՛ ուտենք, երեկոյեան համար էլ պաշար թխէ մեր փողով, ապա, հենց որ արեգակը մտնէ՝ կելնենք։ Նա դուրս գնաց և յետ դարձաւ 9 հացով. 9 հացը 22 հոգուն ի՞նչ անէր... Հացը դերրինք մի կողմ, քիչ յետոյ ուտելու։ Հազիւ անցկացաւ մի ժամ, մի գիւղացի ներս մտաւ և ասաց, որ մատնուած ենք. մենք չհաւատացինք, կարծելով, որ նա միայն ուզում է մեզ հեռացնել գիւղից։ Հանգիստ սրտով մնացինք մեր տեղը, մութին սպասելով. միևնոյն ժամանակ մի մարդ պատրաստեցինք մերոնցից, որ ելնէ և պահպանութիւն անէ։ Դեռ ևս նա տեղից չէր շարժուել, երբ մի կարմիր ֆէսաւոր գլուխ մեր գռնից նայեց ու փախաւ, „բուրդա գըլար“ գոչելով։ Դրանք զինուորներ էին։

Իսկոյն վեր թռանք մեր տեղերից և առաջին վայրկեանում, մի ինչ որ ներքին բնազդմամբ, հեռացանք դռնից։ Մեր սրտերը տրոփում էին... անց կացաւ շփոթման րոպէն և մենք հրացաններս արդէն բռնած՝ պատրաստուեցանք հանդիսաւոր, վճռական վայրկեանին

դիմաւորելու։ Մի ինչ որ խորհրդաւոր լռութեան, մի ինչ որ վեհ անշարժութեան միջից՝ յանկարծ հնչեց „տղե՛ր, ելնե՛նք“ աղաղակը։ „Ելնե՛նք, ելնե՛նք“ լսեցան նոյնպէս մի քանի ձայներ և մենք դիմեցինք դէպի դուռը, հրացանները որոտացնելով։ ԽԷՀՕՆ, մեր ահագին ապագայ խոստացող, համարձակ ԽԷՀՕՆ, մի բոպէի մէջ հրացանի փողով ցիրուցան արաւ անցքի մօտ դարսած խուրձերը, և ամենից առաջ, երկու հոգով դուրս թռաւ։ Ելանք . . . դրան առաջ, մի քայլ միայն մեզանից հեռու, ձեռքը կրծքին դրած, պառկած էր մեր սիրելի ընկերը, ղարաբաղցի ԽԷՀՕՆ . . . անարգ թշնամու գնդակը նրան ձգել էր վայրկենապէս։ „ԽԷՀՕՆ ընկաւ“. այս երկու բառը խորին թախծութեամբ թրթռաց մեր իւրաքանչիւրի շրթունքին։ Ցուզելու ժամանակը չէր. վերցրինք նրա հրացանը և սկսեցինք կուելով ցած իջնել դէպի Անգղ (Խօլաբ) գետի կամուրջը, որ գիւղից ներքև է ընկնում։ Ի՞նչպէս եղաւ, որ մենք մեկ-մեկ գնդակահար չեղանք, այդ մի անլուծելի հարց է։ Յիսունաչափ զինուորներ մարագի չորս կողմը վաղօրօք դիրք էին բռնել, և այնքան յարմար, որ նրանց հրացանի խողովակներն ուղղակի մեզ էին նայում. իսկ մենք ամբողջ մարմնով ցցած էինք նրանց դիմաց։ Մենք չշտապեցինք փախչել, պատսպարուել դիրքերում. կուում էինք կանգնած հարթ-հաւասար ճանապարհի, կամ կալի մէջ, ուղղակի նրանց հրացանների փողերին նշան բռնելով և արձակելով. իրենք չէին երևում. արդեօք շփոթեցա՞ն՝ երբ տեսան, թէ մենք ինչ անփոյթ կերպով ենք վերաբերում դէպի մեր անձը, որ չկարողացան վնասել մեզ, թէ՞ մարագից իրար ետևից թռչելիս և աջ ու ձախ հրացան զարկելիս վախցրեց իրենց, յայտնի չէ, միայն այս կար, որ մեր ոտների տակ փոշի հանող և գլխներովս տըզզալով անցնող գնդակները, բռունների կատաղի ձայների հետ, մեզ ոչինչ անել չկարողացան, ոչ ոքի սիրտը մաղաչափ երկիւղ չձգեց։ Հետզհետէ մենք ցած իջանք, շնչատելով երբէք, որ խմբի կէսը մարագումն է մնացել։ Մի երկու բոպէով դիրք բռնեցինք մի պատի տակ. պէտք էր տեսնել, թէ զինուորներն ինչպէս էին փախչում մեր անշեղ գնդակներից. բոլոր կարմիր ֆէսերը, որոնք համարձակւել էին քարերի յետևից երևալ, կրկին ծածկուեցան։ Միևնոյն ժամանակ նկատեցինք, որ զինուորների մի մասն շտապում է կամուրջը գրաւելու. այդ արդէն մեր անյաջողութեան գլխաւոր աղբիւրը կը լիներ, ուստի թողեցինք դիրքերնիս և վազեցինք դէպի կամուրջը, միևնոյն ժամանակ թշնամու հետ անընդհատ կուելով։ Կամուրջն անցանք. այդտեղ շատ յարմար էր կուել, դիրքի քարեր ևս կային. այդ ի նկատի ունենալով, որոշեցինք կամրջի այդ կողմում մնալ ու կուել, սպասելով խմբի մարագում մնացած մասին. բայց երբ ուշադրութեամբ զննեցինք դաշտը, տեսանք, որ մեր այդտեղ մնալը լրիվ վնաս կարող է յառաջացնել, որովհետև դաշտի մէջ մի բլրակ կար միայն, որտեղ մենք կալող էինք ամբողջ ցերեկւայ համար դիրք բռնել ու կուել, իսկ միւս կողմից արդէն կուի ձայնը լսած՝ ձիաւոր քրդերն շտապում էին այն բլուրը գրաւել։ Կռիւը կազդուրել էր մեր յոգնած, ջարդուած մարմինը. արիւնիս եռում էր և մեր թուլացած ջղերը պողպատի էին վերածուել. այդ կարելի էր իմանալ նրանից, որ մենք ձիաւորներից շուտ գրաւեցինք դիրքը։ Այդտեղ, բլրի ծայրին քարեր շարեցինք և նրանց յետև պատսպարուեցանք։ Արտօսը մօտիկ էր. մերոնցից ոմանք առաջարկեցին՝ թէ քանի որ թշնամիները հեռու են, մեզ ամեն կողմից չեն պաշարել, խփենք, անցնենք Արտօս. այդ առաջարկութիւնը բոլորից ընդունուեց, սակայն ընդդիմացող ևս եղաւ, և մենք մեր տեղն սպասեցինք։

Մինչ այս, մինչ այն, հաւար հաւարի յետևից թռաւ դէպի Ոստան և շրջակայ քրդերի գիւղերը՝ մի կամ երկու ժամւայ ընթացքում ձիաւորների և ոտաւորների ահագին բազմութիւնը՝ գայլերի վհմակների նման, եկան թափուեցան մեր չորս կողմը, Ղըզել-Դաղի բոլոր քարերը գրաւեցին, մեր դիրքի հարաւ-արևելեան կողմի փոքրիկ բլրակի յետևը շարուեցան, արևմտեան կողմի փորած առուներում լցուեցան, մի խօսքով, ամեն մի փոս, ամեն մի քար ազատ չմնաց քրդերից՝ գալիս էին ու գալիս, բայց և այնպէս չվերջացաւ նրանց գալը, տուտը չկտրուեց, և մենք 10-12 հոգով նստել էինք բլրի վրայ՝ շրջապատուած այդ անթիւ բազմութեամբ։

Սակայն ո՞ւմ հոգն էր, թէ ի՞նչ եղաւ մեր միւս կէսը։ Սկզբում սկսել էինք կասկածել, որ նրանք արդէն զոհ գնացին թշնամու առաւելութեանը, մանաւանդ, երբ մարագի ծուխը թանձր օղակներով երկինք բարձրացաւ։ Բայց մեր կարծիքը փոխեցինք շուտով, որովհետև մօսինիների ձայները կրկին լսելի եղան։ Ուրեմն նրանք դեռ ևս կուում և դէպի մեզ էին գալիս։ Որպէսզի քրդերը ժամանակ չունենան նրանց ճանապարհը փակելու, սկսեցինք զբաղեցնել հրացանաձգութեամբ։ Օ՜, մեր սրտերը փառաւորւում էին, երբ 3000 քսյլի վրայ նոր օգնութեան եկող քրդերին մեր մօսինիների գնդակները փախցնում էին այս ու այն կողմ. ծիծաղելի էր տեսնել, թէ ի՞նչպէս լոքերը այդքան տարածութեան վրայ մեզ վրայ շէշխանայ հրացան էին արձակում։ Մեր կուին. իսկապէս փառաւոր էր. 10-12 հոգով դիմադրում, ի՞նչ դիմադրել, պար էինք ածում մարտինիներով ու շէշխանաներով զինուած մի մեծ բազմութիւն. մեր մէջ երբէ՛ք չէինք թողնում բերդանկայ արձակել. գործում էին միմիայն հրաշալի մօսինիները. ահարկու գնդակը սլանում էր այստեղ ու այնտեղ վնասացող թշնամու խմբերի գլխին, նրանց փախուստ դարձնում, յետևից առանց մաղաչափ ծուխ թողնելու. էլ ո՞վ կը համարձակւեր իր դիրքից գլուխը բարձրացնել որ յանդուգը կը մօտենար։ Մինչ այսպէս մենք

ծաղրում էինք Թշնամուն, կէմի կողմում հրացանների ձայներն սկսեցին շուտ-շուտ և շատ-շատ լսուիլ. դիտակն ուղղեցինք այն կողմը և տեսանք, որ մեր ընկերները դուրս են եկել այրուող մարագից, անցել են կամուրջը, և իրենց հետևող զինուորների հետ ճարպկութեամբ կուռելով՝ գալիս են դէպի մեզ։ Բոլորս էլ ուրախութեամբ համակուեցանք, և, թէև լսել չէին կարող, սկսեցինք կանչել և սուլիչներով սուլել։ Այնուհետև մեր ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացրինք նրանց գալիք ճանապարհի վրայ, միևնոյն ժամանակ աշխատելով չթողնել Թշնամուն իրենց տեղերից շարժուել։ 1/4 ժամ տևեց, մինչև մերոնք մօտեցան մեզ. այժմ վստահ էինք, որ նրանք մեզ նկատելով՝ կիմանան ովքեր լինել։ Նիս և կը գան մեր կողմը, բայց այդպէս չեղաւ. մեր աղաղակներն ու կանչենիս վերագրում են քրդերին ու զինուորներին, և ուղղակի քայլում են դէպի այն կողմը, ուր արդէն Թշնամին դիրք էր բռնել։ Բոպէն սարսափելի էր. կարճ ժամանակից յետոյ նրանք կը լինէին ուղիղ Թշնամու դիմաց և թերևս քչերն ազատուէին։ Ի՞նչպէս անէինք նրանց իմաց անելու համար, որ բլրի վրայինը մենք ենք. թէև քրդերը բաւականաչափ մօտեցել էին մեզանից և նրանց գնդակները բլրի ամեն կողմից հողը երկինք էին թռցնում, այնուամենայնիւ մենք դուրս էինք գալիս շարած քարերի յետևից և գոռում, սուլում ու տոպրակնիս ցոյց տալիս։ Մեր ջանքը իր ցանկալի հետևանքը ունեցաւ. նրանք վերջապէս ճանաչեցին մեզ և շրջեցան դէպի մեր դիրքը. քիչ յետոյ մեզ մօտ էին։ Այս բոպէն հրաշալի էր. ուրախական աղաղակները թռան մեր բերաններից և նրանց գալուստը ողջունեցին։ Նրանք նոյնպէս մարագից դուրս էին եկել յաջողութեամբ, զոհ տալով վանեցի մի երիտասարդ, ԴԱՒԹԻՆ, որի Այգեստանում մնող խմբերին արած ծառայութիւններն ու իր յանդուգն գործերն անմոռանալի են։

Երբ մենք հեռացել էինք մարագից, Թշնամին սկսել էր իր վայրագ գործողութիւնն աւելի կատաղօրէն. հետևող զինուորները ևս կամրջի մօտից դարձել էին և իրենց ընկերների հետ միանալով՝ միահամուռ ուժով յարձակուել պաշարածների վրայ. սակայն մերոնք իրենց կողմից անգործ չէին մնացել. դռնից ելնելը վտանգաւոր համարելով՝ ծակել էին պատը և այնտեղից դուրս թռչելով՝ անցել կամուրջը, որից յետոյ արդէն մենք տեսանք բոլորը։

Այժմ, երբ այլևս երկմտութեան տեղիք չունէինք մեր ընկերների մասին, սկսեցինք մեր Թշնամիների գըլխին գնդակ տեղալ 20 հրացանով. քրդերը որտեղ ծածկուել էին, այնտեղ էլ մնացին. իսկ զինուորները, որ եկել արևելեան կողմում քրդերի մի մասի հետ շղթայ էին կազմել և իրենց ճարպիկ զալպերով գընդակներ էին շաղում մեզ վրայ, իսկոյն ծածկուում էին, երբ նիկելապատ գնդակները փոշու ամպ էին հանում իրենց շուրջը։ Իսկապէս նախանձելի էր մեր այդ կուիւը. կարծես մի անհաւասար զօրութեամբ կաշկանդել էինք այդ բազմատեսակ բազմութիւնը։ Իսկ երբ 2700 քայլի վրայ մօտենին ձիու Թամբից գետին իջեցրեց ձիաւորին, այնուհետև խորին յուսահատութիւնը տիրեց երկչոտ Թշնամուն և մենք Թագաւորում էինք մեր փոքրիկ Թագաւորութեան մէջ, բլրակի գագաթնակէտին։ Առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 6 1/2-ը մեր բերնից մի հառաչանք, մի յուսահատական խօսք չելաւ. ոգևորութիւնը տիրել էր մեզ և մենք չէինք կարողանում երևակայել, որ մահը մաղաչափ կարող է վախցնել մեզնից մէկն ու մէկին.

Մութը իր թևերը մեկնեց կուռի դաշտի վրայ. այդ այն բոպէն էր, երբ պէտք է վերջ տրուէր կուռին և բլուրը թողնուէր։ Շրջակայքից բոլոր Թագնուած քրդերն ու զինուորները գլխներն հանեցին և վայրենի աղաղակներով ու հայհոյանքներով սկսեցին դէպի մեր դիրքը վազել։ Այդ ժամանակ խորամանկութեան դիմեցինք, որոշեցինք, որ բէրդանկաւորները նրանց վրայ հրացան արձակեն, իսկ մօտենաւորներն իջնեն. այդ այն օգուտն ունէր, որ Թշնամին կը կարծէր՝ թէ դեռ ևս դիրքումն ենք, երբ բոցերը կը տեսնէր։ Այդպէս էլ արինք. „լ՝ օ՝ լ՝“-ներն ու աղաղակները կտրուեցան, երբ հրացանները ճռճռացին։ Այդ բոպէից օգուտ քաղելով, բոլորս էլ բլրից իջանք, մինչդեռ քրդերն ու զինուորները դեռ շարունակում էին մեր դատարկացած դիրքերը գնդակահարել։ Բլրի տակ մի առուից ջուր խմեցինք, յաղեցրինք ծարաւնիս, և նստեցինք ափին, մի քիչ ամփոփելու մեր անելիքներս։ Որոշեցինք այդ գիշեր եկնել Արտոս, այնտեղից էլ անցնել Շատախ։ Որոշումը վերջացած էր և մենք պատրաստուում էինք ճանապարհ ընկնելու, երբ մօտուկից ձիանց դոփիւններ լսեցինք. անկատելի ձնալու համար չշարժուեցանք. սակայն նրանք ուղղակի դուրս եկան մեզ վրայ, առանց մեզ նկատելու. մեր հրացանները որոտացին և նրանցից երկուսը նկատելի էր, թէ ինչպէս գլորուեցան. նրանց կողմից մի հրացան արձակուեց և այդ միակ գնդակը խլեց մեզանից մեր զարաբաղցի ՆԻԿՕԼԱՑԻՆ, որ առաջ „Հնչակեան“ կուսակցութեան մէջ էր։ „Ցղե՛ր ջան, ես ընկայ, կեցցէ՛ Հայաստան“ կանչեց նա խզուած ձայնով և անշարժ մնաց . . . Մենք վերցրինք նրա հրացանը և հեռացանք։

Այդ կուռում մենք զոհ տուինք 3 հոգի, 3 հոգի էլ թեթև վիրաւորներ ունեցանք. Թշնամու կողմից ընկել էին 4 զինուոր և 4 քիւրդ, չհաշուած վերաւորուածներն ու ձիանքը։

Ձիաւորների հետ ունեցած դէպքից յետոյ ուղևորուեցանք դէպի Արտոս, մեր յետևից ունենալով սուր Թանի որսորդական շներին, որոնք շէփորների անընդհատ ձայներով, գալիս էին դէպի մեզ, բայց ոչ յատկապէս մեզ համար, այլ հայաբնակ քերծ գիւղում գիշերելու։ Մի երկու ժամից յետոյ մենք Արտոսի ստո-

րոտումն էինք։ Այնտեղ արդէն նստեցինք հանգստանալու։ Այժմ, երբ նստել էր մեր յուզմունքը, հոգեկան լարուած դրութեան մէջ չէինք գտնուում և կարող էինք կանոնաւորապէս մտածել, սկսեցինք առանց մէկին ու միւսին խօսեցնելու, իւրաքանչիւրս մեզ ու մեզ խորհել... Այդ դրութեան մէջ ամեն մէկիս էլ կարելի էր խղճալ. երրորդ օրն էր, որ մենք հաց չէինք տեսել. Կէմուլ 9 հաց տուին, այն էլ մնաց մարագում. ստամոքսնիս սոսկալի կերպով հաց էր պահանջում. ոտներնիս սպառնում էին չշարժուիլ եթէ պաշար չըտրուի։ Կուի ժամանակ մենք ամեն բան մոռացել էինք, իսկ այժմ... նայում էինք բարձրագագաթ սարին և հաշիւ տալիս, թէ արդեօք կարող ենք բարձրանալ։ Փորձեցինք դարու հասկեր մաքրել և հատիկներն ուտել, չյաջողուեց. ի՞նչ արած. ծանր քայլերով, հանդըստանալով եկանք սարը, և երբ մեր դիրքը բռնեցինք, լոյսը բացուեց։ Այդ օրն էլ անցկացրինք Արտոսի վրայ, սինձ և աւելուկի թելեր ուտելով։ Գիշերը վերջապէս հասանք հայաբնակ մի գիւղ, որտեղ հանգստացանք և մէկ-մէկ գարի հացիկներով լռեցրինք մեր ողբացող ստամոքսնիս։ Այժմ հարկաւոր էր իմանալ՝ Վարդանը եկա՞ծ էր այս կողմերը. ոչ մի նշան չկար։ Միայն մի քանի օրից յետոյ մեզ հասաւ Վարդանի զինուորներից մէկը, Նախոն, որի մասին անհրաժեշտ է գոնէ մի քանի խօսք ասել։

Երբ Վարդանը Կէմայ սարումն էր, նրան ուղարկում է Ղազալ-դաղ գիւղից հաց բերելու. սակայն մեր կռիւն աբգելք է լինում նրան վերադառնալու սարը, յետոյ էլ ուղղւում է դէպի Շատախ. բայց ճանապարհին մի գիւղում բռնւում է մի ինչ որ քիւրդ բէկի խօլամից (դրանիկ), „Ֆէդայի“ անունով. ոչ մի երդումով, ոչ մի փաստով չի կարողանում նրան հաւատացնել, որ ինքը հասարակ հայ է և ոչ „Ֆէդայի“։ Քիւրդը նրան յետևը գցած տանում է դէպի քաղաք հիւքըմաթին յանձնելու։ Բայց Նախոն չի թողնում նրան իր մտադրութիւնն իրագործելու. յետևից վրայ է թռչում, նրա երկու խէնջարները խլում գօտուց, և խրում երկու կողերը, սպանում ինչպէս շան, խողխողում և կողոպտելով՝ յետ դառնում։

Նրան էլ մեզ հետ վերցնելով՝ մի թեթև շրջան կազմեցինք Շատախում և ուղղեցանք դէպի Վարագ։ Վերադարձին կրկին Հայոց-Ձորում, Կէմայ սարում թեթև ընդհարում ունեցանք քրդերի հետ, որ միայն հրացանաձգութեամբ վերջացաւ։

Վարագի ճանապարհից մարդ ուղարկեց քաղաք, որպէսզի այնտեղից մեզ համար ոտնամաններ և հաց հանեն, իսկ մենք եկանք սարը, „մասուր“ ուտելով՝ սպասելով հացին։ Երկրորդ օրը հասան հաց և ոտնամաններ։

Ախոռկայի կուի մասին հետևեալ անգամ։

ԿՈՄԻՏԱՍ ՔԱՀԱՆԱՆ

—

Վանայ Դաշնակցական Կենդ. Կոմիտէի ձեռքով սպանուած Տէր-Կոմիտասի գործած դաւաճանութիւնները շատ շատ են։ Միայն բաւական է յայտնել, որ սա էր մեր եզ առաջնորդական տեղապահ՝ Արսէն վարդապետի հետ եկեղեցու բեմէն նզովք կարդացող յեղափոխականներուն, յականէ յանուանէ սրիկայ, անբարոյական անուանելով նրանց։ Նզովք կարդացին և այն ամենուն, որոնք տեղ կուտան յեղափոխականներին, յորդոր կարդացին բոլոր ժողովրդին, որ ամեն կերպով ըստեսեն և „դաչաղներու“ որտեղ լինելը իմանալով՝ անմիջապէս կառավարութեան յայտնեն, կամ առաջնորդարանին։

Կոմիտաս քահանան ցերեկւայ ժամ 11-ին եկեղեցիէն մենակ հիւանդի վրայ աւետարան կարդալու գնացած ատեն՝ տէրրօրիստը կը հասնի նրան, դաշոյնը քաշելով վզի մէկ կողմէն կը զարնէ՝ միւս կողմէն դուրս կուտայ և առջևի մասը կտրելով՝ գլուխը ետևը կը կախուի, և անմիջապէս շունչը կը փչէ դաւաճանը։

Տէրրօրիստը ազատ է։ Կառավարութիւնը ոչ մէկ խստութիւն ձեռք չառաւ այս մասին և ոչ ոքի չը բանտարկեց։

Սպանուած քահանան դաւաճան Յովհաննէս աղայի (սպանած անցեալում նոյնպէս դաշնակցականների ձեռքով) ամենամտերիմ խորհրդականն էր։

Թող հանդերձեալ կեանքում իրար տեսնեն և ղղեան։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԻԼԻԿԻԱՅԻՑ

—

29/10-ին Նոյեմբեր 96 թ.

Գայմանագրութեան կնքուելէն ի վեր երեք գունդ (2,400) զինուորներ կապասեն Ուլնիոյ մէջ։ Թէեւ զօրանոցի շինութիւն ձեռնարկած է, բայց ստոյգ բան մը չենք գիտեր այս մասին, նոյնպէս Մարաշէն մինչեւ Զէյթուն խճուղիի շինութիւն ձեռնարկած է կառավարութիւնը, տեղական ժողովուրդները ձրի եւ բռնի աշխատեցնելով։ Միւս քաղաքներու վիճակը առաջնանէն տարբերութիւն չունի, ամեն տեղ խեղճութիւն, թշուառութիւն...

Թիւրքերուն եւ հայոց մէջ գրգռումը կը շարունակի միշտ. անցեալները թիւրքերը որոշած են ընդհանուր կատարեալ կոտորած մը յառաջ բերել Այնթապի մէջ. բայց գայմագամին լաւութեան եւ աշխարհութեան շնորհիւ առաջն առնուած է, այժմ կառավարութիւնը փոխանակ այդ անձը վարձատրելու՝ պաշտօնակ ընկ ուած է, եւ խեղճը կը թափառի Բիրիոյ մէջ։ Վերջին դէպքերու առթիւ այնթապցի բանտարկեալները, որ անպարտ արձակուած էին նահանգական դատարանի վճռով, կրկին ձերբակալել սկսած են, իբր թէ իրենց անպարտութեան վճիռները Պոլսոյ Թէմիզի դատարանի կողմանէ իբրեւ թերի եւ ստրկած են. արդէն տասնի մը չափ անձինք կրկին բանտարկուած են, մնացեալներն ալ կը փնտռուին եղեր։ Մինչեւ ցայժմ անպարտ անձակուած անձի մը թղթերուն իրբեւ թերի վերադառնալն ամենահազուագիւտ երեւոյթ մ'է, կարեւի թէ կառավարութիւնը ասով կուզէ հասկցնել դատարանին, թէ պտնց ամենն ալ ծանր-ծանր պատեհներու ենթարկէ, որովհետեւ հակառակ կառավարութեան կամաց, ասոնք կո-

տորածէն ազատուելու բարեբախտութիւնն ունեցած էին։

Յեղափոխական մի գործիչի մատնութեան զոհ գացած են Կիլիկիոյ զանազան քաղաքներէն 150-է աւելի անմեղ, բայց հարուստ, ազդեցիկ եւ ուսումնական մարդիկ։

„ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԻԱՆ“

Երկար ժամանակ «Երիտասարդ Թիւրքիա» կուսակցութեան անդամների մէջ նկատուում է մի տեսակ խմորում։ Սրտատանջանում ցրւած զանազան տեսակ խմբերը շատ են դէս ու դէն ընկնում, զանազան փոփոխութիւններ անում, բայց դարձեալ իսկական յեղափոխական ճանապարհը չեն կարողանում գտնել, դարձեալ չարած հայհոյանքով շարունակում են դիտել սուլթանի գազանութիւնները եւ աղիողորմ արտասուքներ թափելով, ողբալ սիրելիների, բարեկամների անդառնալի կորուստը։

Վերջերումս Պարիզում կայացած «Երիտասարդ Թիւրքիայի» ժողովից մենք իսկապէս շատ բան էինք սպասում։ Բայց այս անգամ էլ յուսօք սրտի պէտք է խոստովանենք, որ մեր սպասածները չարդարացան, որ լեռը մուկ ծնեց։ «Միզանի» առաջին համարից, որ այսուհետ չարունակելու է լոյս տեսնել Պարիզում, իբր կուսակցութեան պաշտօնական օրգան, մենք տեսնում ենք, որ կուսակցութիւնը մնայել է նոյն անորոշութեան մէջ, ընդունելով նպատակ «կառավարութեան ու խալիֆայութեան փրկութիւնը» եւ զբաղուել է գլխաւորապէս վարչական փոփոխութիւններով։

Մուրադ բէյն է նախագահը, կամ մի ուրիշը. Ֆենիչ ու Գործադիր մարմինը 3 հոգուց է բաղկացած. թէ 13. կուսակցութեան ներկայացուցիչը այս անունը պիտի կրի, թէ մի ուրիշ . . . այս տեսակ մանր-մունր խնդիրները չեն, որ պիտի զբաղեցնեն «Երիտասարդ Թիւրքիային» ներկայ տագնապալից րոպէին, այլ իրենց նպատակի ոյժ, խեղճ դնելը ու այդ նպատակին հասնելու հաստատ, գործնական միջոցներ ընտրելը։

Միակ միսիթարականն այն է, որ այսօր «Երիտասարդ Թիւրքիան» անուրանալի է համարում հայ յեղափոխականներիս արժանաւորութիւնները եւ ներում է մեր սխալները։ Ցոյս տածենք, որ այս խոստովանութիւնից յետոյ իրենք տաճիկներն էլ կահանջեն ձեռք բերել նոյն «արժանաւորութիւնները»։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—Ստամբուլում ընդհարում է տեղի ունեցել, որի ժամանակ սպանուել են կառավարութիւնից դժգոհ շատ սոֆտաներ։

—Կրէտական ապխտայիան չարունակւում է։ Յունաստանի պինուելը երկիւղ է ներշնչում, որ առաջիկայ դարնան չարժում տեղի կունենայ Մակեդոնիայում։

—Շէֆիկ բէյը՝ ոստիկանութեան նոր նախարարը ոստիկանական բարենորոգումները է մտցնում Պոլսոյ թաղերում։

—Լուրեր են պատում, որ ընդհանուր ներման իրադէն հրատարակել է։ Բոլոր բանտարկած հայերը ազատ պէտք է թողուին, բայի 82 մահուան դատապարտուածներից, որոնք մատամի ուղարկուելու են տեղոյն եւ մատամի յանձնուելու են պատրիարքի իրաւասութեան։ Մաս-դիլղի եւ Բրիվլիզի եպիսկոպոսներն ուղարկուելու են Երուսաղէմ։

—Որովհետեւ ընդհանուր ներման վրայ գլխաւորապէս պնդում էր ֆրանսիական դիպլոմատիան, տաճիկ կառավարութիւնը հեղինութեան համար յայտարարեց, որ ներման պէտք է արժանանայ նաեւ Մակեդոն բէյը՝ հայր Սալվատորի սպանման հեղինակը, հակառակ դէպքում բոլոր հայերն էլ պէտք է ազատէին ներման ենթարկուելու։ Այսօր յաղթութիւնը Դամպոնի կողմն է երեւում. սուլթանը խոստացել է, որ Մակեդոն բէյը դատի է ենթարկուելու եւ որ ֆրանսիական թարգմանը Մարաշում կարող է ներկայ լինել դատավարութեան։

—Բացի այն գրաւոր յայտարարութիւնից, որ արել է ռուսական դեսպանը՝ եւրոպական կօնտրոլի անհրաժեշտութեան մասին,— եթէ միայն Բ. Դուռը ձեռնամուխ լինի հանրային պարտուց վարչութեան հասոյթներին,—Նէլիդովը ուղղել է մի նոր յիշատակագիր, որին շատ մեծ նշանակութիւն են տալիս։

—Դեսպանների վճիռը՝ ամենախիստ զգուշութիւն պահպանել իրենց խորհրդակցութիւնների մասին, նոյն իսկ Եւրոպական միւս պետութիւնների ներկայացուցիչներից, սաստիկ ազդեցութիւն է թողել սուլթանի շրջապատողների վրայ։

Կառավարութիւնը հրատարակել է 1897 թ. եկեւ տարի հաշիւը. բանից դուրս է գալիս, որ այս տարուայ բոլոր ծախքերը ծածկելուց յետոյ կառավարութեան ձեռքին մնում է աւելորդ 82,000 ոսկի դուրս։

Լռեցէ՛ք, անամօթ, ստախօս թղթակիցներ. պապանձեցէ՛ք, չար լեզուներ. ամաչեցէ՛ք, մնանկացած Եւրոպայի նենգամիտ ներկայացուցիչներ . . . Տաճկաստանը ծաղկած է եղել եւ ծաղկած կը մնայ։

Ա Զ Դ

Ֆիլիպպօպոլից գրում են մեզ.

Կարապետ Էշնաեան անուն հայ մեծատունը արծաթանի մը մէջ յեղափոխականներու նկատմամբ անվայել լեզու մը գործածած ըլլալուն, յեղափոխական մը իր պարտքը հատարեց փողոցին մէջ ապտակել եւ ցեխին մէջ պառկեցնել այդ անամօթ եւ անխիղճ հարուստը, իր խօսքերը իրեն վերադարձնելով։

Ոստիկանները վրայ հասնելով, ձերբակալեցին երիտասարդը, որ ոստիկանապետին առջեւ անվրդով հետեւեալ յայտարարութիւնը ըրաւ. „Այս խայտառակ Կարապետը անվայել խօսքերով . . . հայհոյեց հայ յեղափոխականները։ Ես յեղափոխական եմ. հայրս, մայրս, քոյրս զոհած եմ հայրենիքիս համար եւ ատոնց փոխարէն այդ խօսքերը պիտի լսեմ։ Իմ պարտքս էր մեր, հետեւաբար եւ իմ պատիւս պաշտպանել։ Եթէ Թիւրքիոյ մէջ ըլլար, դանակը փորը պիտի խրէի. Թող աղօթք ընէ, որ Պուլկարիոյ մէջ է“։

Ոստիկանապետը զարմացումով լսած է քաջ երիտասարդին խօսքերը եւ „թո՛ւ“ ընելով թքած է, ասելով Էշնաեանին արատաբերած հայհոյանքը։

Երիտասարդը ազատ արձակեցին նոյն երեկոն իսկ։

Էշնաեան թող բախտաւոր համարի ինքզինքը, որ յեղափոխականին անհատական սրտմտութեան հանդիպեցաւ։ Ձեռնհաս յեղափոխական մարմինը աւելի պաղ արիւնով, բայց աւելի սոսկալի կնոջով կրնար լուծել իր վրէժը։

Ամենուն ալ ակամէջին օր ըլլայ աս։

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Բօլգ. Փիլիպպօպոլ քաղ. կօմիտէի անտուկի մէջ ստացուած է 225 լեվ 20 ս.

Լօվիչ քաղ. բժիշկ Սարեանօվէն 20 ֆրանկ։

Ր. քաղաքի ուսանող. խմբից 15 բուբլի։

Ցոպրիչի Եփրատ-Վաչէ-Արաբ խմբից 12 ֆր.

Լօնդօնի „Ցիւշ“ ընկերութիւնից 20 ֆր.

Երկաթ քաղ. Երկաթ խմբէն 1 օսմ. ոսկի, 1 ֆրանսիական ոսկի և 8 արծաթ մէճիտ։

Սուլինա քաղ. դաշնակցական խմբից՝ Սիմէոն Սերգիսօվի ձեռամբ 30 ֆրանկ։

Դաշնակցութեան անծանօթներից խնդրւում է թղթակցութեան եւ նիւթաւորութեան հասցէ դիմել.

Rédaction du Droschak, Genève (Suisse)

№ 2 VI ՏԱՐԻ 20 ՅՈՒՆԻՍԱՐ 1897

"Droschak"
ORGANE
de la Fedération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse: Rédaction du "Droschak"
GENEVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
R.F. BIBLIOTHÈQUE LIBRARY

ՕՍՄԱՆԵԱՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Ս. ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

(ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՏԱՃԿԵՐԷՆԷՆ)

—

Օսմանցինե՛ր,

Կը տեսնենք՝ թէ ամսով վամսով ժամանակ անցնելով և ասոր պատճառ եղող բռնաւորներուն գլուխ ծռելով, կամ խրատներ կարդալով, ի՛նչպիսի սարսափելի հետեւանքներ առաջ կուգան։ Մանաւանդ ամենքնիս ալ գիտենք, որ նա հարամկաթնակեր Համիդը պատահածը գզելու կատղածութեան աստիճանին հասած է։

Օսմանցինե՛ր, յայտնի է՝ թէ կատղած շուն մը սպաննելը անհրաժեշտ է։ Ա՛րդ, „Օսմանեան Յեղափոխական Կուսակցութիւնը", որ մինչև ցարդ կզգուշանար արիւնահեղութենէ, հաստատապէս որոշած է հարստահարիչներուն չափը ցուցնելու և հարստահարեալներուն վրէժը լուծելու համար՝ զէնքի դիմել։ Ուր որ ալ ըլլայ, առաջին առիթը ներկայացածին, կուոյ ասպարէզը պիտի նետուի։ Ուրեմն, օսմանեան սիրտ կրողներ, յուսով ենք, որ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ բառը խորթ չի հնչեր ձեր ականջին և նկատելով մեզ՝ իբրև պարտաճանաչ ու պատուաճանաչ, ժամ առաջ կը կատարէք արդարութեան ու մարդկութեան ձեր վրայ դրած պարտականութիւնը։

Նախ և առաջ սա ալ կուզենք յայտնել՝ թէ մեր մասին ով որ գէշ խօսի, կրցած մէկ բանը եթէ մեր առաջարկած պարագային չի կատարէ, մանաւանդ—բացի անարգանքի դրօշմը կրող մեծ ու պզտիկ լրտեսները—եթէ ոստիկանութիւնը կամ զինուորականութիւնը յանդգնի մեր ճամբան խափանել, մահը միայն կարող պիտի ըլլայ մեզ բաժանել։ Այո՛, պիտի մեռնինք, պիտի կոտորենք, այրենք ու քանդենք. մարդէ վախ չունինք։ Սրտերն ու խիղճերը շատոնց արդէն համաձայն են ատոր։ Արդէն օրէնքը, կրօնական վճիռները շատ ուղիղ ու պարզ կերպով ցոյց կուտան մեր գնալիք ճամբան . . . Ուրիշ ճար չկայ։

Ո՛չ միայն քանի մը սև հոգիները շանսատակ հանելու և գազանաբարոյ փատիշահին Եըլտոզ քանդելու և անոր մոխիրներն օդին մէջ տարտղնող ուժանակներով սպառազինուած ենք, այլև ժողովրդին փրկութեան համար ամե՛ն զոհողութիւն յանձն առած ենք։

Ո՞վ բռնակալութեան ճնշումէն ազատուիլ ջանացող, բայց արիւն թափել չուզող հայրենակիցներ, եկէ՛ք Բ. Դուռը՝ կամ նահանգներու կառավարական պալատները լեցուեցէք. եթէ հարկ է, քաշեցէ՛ք բիրերը, սուրերը, մի՛ վախնաք . . . զի մէկ մաղերնուդ դպչող վատերուն հոգին մեր ձեռքն է։ Այո՛, ոտքի կանգնէ, ո՛վ ժողովուրդ, որ մինչև ցարդ գլխիկոր մնացած ես, քչիկ մը ցոյց տուր օսմանեան կորովդ, և սրբէ ամեն կողմէ մեր ճակտին նետուած սա նախատինքը՝ թէ „նոր օսմանցիները չունին հին օսմանցիների արիւնը"։ Մեր հայրենակից հայերէն օրինակ առէք, որպէս զի անցեալները գործուած յանցանքը քաւի, ձեռքերնիդ անոնց երկնցուցէք։ Եթէ պատիւներուդ չէք կերցներ ետևնուն գնալ առաջևնին ինկէք . . . Ի՞նչ դառն է . . . այս չափ տարի է մէկզմէկու հետ ապրող, միևնոյն հողին վրայ մեծցող մեր եղբայրներուն հետ երես երեսի չենք կրնար նայիլ։

Ցնցուեցէ՛ք, օսմանցիներ, գոնէ Աստուծոյ երկիւղով ցնցուեցէք, և սրտի հաստատակամութիւնով մէկդի նետեցէք սա տրկութեան բեռը։ Այդ թուլասրտութիւնը վայել չէ օսմանցիութեան և միւսիւլմանութեան, արդարև արատ մ՚է։ Զէ՞ք լսեր. բռնակալ կառավարութեան անգթութիւններուն զոհ գնացող հայրեր, մայրեր, եղբայրներ և քաւուկներ երկրէն ու երկինքէն „վրէ՛ժ, վրէ՛ժ" կաղաղակեն։

Գոռացէ՛ք, մնչեցէ՛ք օսմանցիներ . . . Կեցած տեղերնիդ մի՛ գամուիք մնաք, օգնութեան հասէք տուքքերու տակ ճնշուած թշուառներուն, ծերերուն ու կորիճներուն, որոնք քաղաքական, իրաւ կամ անիրաւ, պատճառներով կը ձերբակալուին, առանց անոնց ընտանիքին ու զաւակներու ողբ ու կոծին ուշ դնելու։ Բղքտեցէ՛ք ձեր դլխուն փորձանք եղող դահիճները, որպէսզի ձեռք-ձեռքի տալով հրապարակը իսկոյն մաքրուի, որպէսզի բոլոր օսմանցիները, որոնք բանտերուն, աքսորներուն, նոյն իսկ Անատոլիի, Արաբիոյ և Ռումելիի առատաբեր վայրերուն մէջ անօթութեան ու թշուառութեան մէջ կը հեծեն, քիչ մը անդորրութեան երես տեսնեն։

Ակնկալ վերջը „իրաւունք կամ մահ“ գոչելով, վճռապէս գործի պիտի ձեռնարկենք, արմատախիլ ընելով սա բռնակալ կառավարութիւնը և հաստատելով „Խորհրդարանը“։

Դիտցա՛ծ ըլլաք, մենք անմեղ ենք այլևս։

ՎԵՐՋԱՊԷՍ

Երկար ժամանակից ի վեր անհամբեր սպասող ձայնը վերջապէս հնչեց։ Մեր առաջն է ահա „Օսմանեան Յեղափոխական Կուսակցութեան“ անդրանիկ շրջաբերականը, որն իր բացարձակ յեղափոխական ոգով նոր դարագլուխ է կազմում օսմանեան ազգի համար։ Դարերից ի վեր անշարժ, տգէտ, անզգայ հռչակուած օսմանեան ազգը ոտ է դրել այսօր իսկական յեղափոխական ուղիի վրայ. նա իր համարձակ զաւակների բերանով հաստատում է լուսաւոր մարդկութեան դիմաց, որ ինքը վաղեմի անփոյթ, իր ցաւերին անգիտակ, առաջադիմութիւնից խորշող, կամ լուռ ու մունջ տանջուող և գթութիւն աղերսող ժողովուրդը չէ այլ ևս. նա սկսել է ճանաչել իր դժբախտութեան բուն արմատը, տապարը ձեռքին դիմում է այդ արմատին և անձնազոհութեան ճանապարհով ձգտում իր անդորրութեան։

Այս ձայնը վաղուց պէտք է հնչէր. օսմանցիները վաղուց պէտք է հետևէին հայերիս օրինակին. դարերի ընթացքում բռնակալութիւնը ջանքեր չի խնայել յեղափոխութեան սերմերի համար պարարտ հող պատրաստելու։ Բայց երկար ժամանակ օսմանեան ազգը չէր կարողանում լսել և հաւատալ հայ յեղափոխականներիս. երկար ժամանակ մենք ապարդիւն ջանքեր էինք թափում՝ ցոյց տալու, թէ մեր ձգտումը չէ ձեռք բերել որ և է գերիշխանութիւն, մեր լծի տակ ձգել մահմեդական տարրը, այլ մեր նպատակն է պարզապէս Տաճկահայաստանի ազատութիւնը, նրա մէջ ապրող բոլոր ազգերի բարելաւութիւնը։ Կուի ասպարէզում թէ՛ գործով և թէ՛ խօսքով մենք ցոյց էինք տալիս ամեն մի քայլափոխում, որ մեր կռիւը մահմեդական ժողովրդի դէմ չէ, այլ այն կառավարութեան, որի լծի տակ հեծում է նոյն այդ ժողովուրդը։ Դառը կսկիծ էր տիրում մեր սրտին, երբ մեր ընկերները՝ ամենաչնչին գաղափարներով տոգորուած, աշխատաւոր ժողովրդի ազատութեան գործին հոգով-սրտով նուիրուած՝ տանջուում, ընկնում, նահատակուում էին այն մարդկանց ձեռքով, որոնց դէմ նրանք ոչ մի թշնամական զգացմունք չունէին, որոնց դրութեան բարւոքման համար նրանք թողել էին իրենց անդորր կեանքը և նետուել յեղափոխական տատասկոտ ասպարէզը։

Մահմեդական տարրը մեզ չէր հասկանում, սակայն մենք չէինք վհատուում։ Դեռ համաճարակ կոտորածներից շատ առաջ, նկատելով սուլթանի գաղտնի պատրաստութիւնները, մահմեդական ամբոխի անմիտ գրգռումը, մենք նախագուշակեցինք հայ ազգի գլխին գալիք չարիքը և յուսահատական կոչ արինք՝ այդ չարիքի առաջը գէթ մասամբ առնելու համար՝ հասկացնել տանք մեզ մահմեդական ամբոխին։ Մենք հրաւիրեցինք հայ յեղափոխական երիտասարդութիւնը՝ ձեռք տալ „Երիտասարդ Թիւրքիային“, որը մեր խորին համոզմամբ վաղ թէ ուշ պէտք է իր ձեռքը առնէր յեղափոխական կարմիր դրօշակը։ Սակայն ի զուր. մեր կեանքն այնպիսի հսկայական քայլերով առաջ ընթացաւ, սուլթանն այնպիսի եռանդով գործեց և հայ ազգի ու մահմեդականների մէջ եղած անդունդն այնպիսի խորութեամբ բացուեց, որ ոչ մի հնար չմնաց ոչ հասկացնելու և ոչ հասկանալու...

Մահմեդական տարրի լաւագոյն մասին պարզած մեր ձեռքը կամ մնում էր օդի մէջ, կամ հանդիպում էր կուրացած ամբոխի սրին ու կրակին։

Ճիշդ է, օսմանեան ժողովրդի յառաջադէմ մասն անկարող էր հանդիսանում իր ողբալի դրութեան դարմանը շուտով գտնելու. ճիշդ է, որ մեր արած ջանքերը խորտակւում էին սուլթանի մեքենայութիւններին հանդիպելով, բայց ճիշդ է և այն, որ դարձեալ նոյն այդ սուլթանն էր, որ իր անլուր գաղանութիւններով բացեց վերջապէս օսմանեան երիտասարդութեան աչքը, ոչնչացրեց այն անդունդը, որ բաժանում էր նրան հայ յեղափոխութիւնից և դրեց նրան իր կոչման բարձրութեան վրայ։

Մեծ է զօրութիւնն սուլթանի... նա էր, որ «չ-խար-հային գազան դարձրեց ու նրա թաթերը ճանկերով զինեց. նա է, որ այսօր խալիֆային հլու-հպատակ տաճկին ձգեց յեղափոխութեան գիրկը և ռումբ դրեց նրա ձեռքը։

Այսօր տաճիկն է, որ յանուն տուրքերի տակ ճնշող թշւառների գոչ է անում իր ժողովրդին և հրաւիրում՝ նրան „սպանել կատղած շանը“, խորտակել Բ. Դուռը, կառավարչական հիմնարկութիւնները... նա է, որ յայտարարում է, թէ ժողովրդի փրկութեան համար ամեն զոհողութիւն յանձն է առած. նա է վերջապէս, որ հրաւիրում է օրինակ առնել հայերից և ձեռք մեկնելով մեզ, քաւել անցեալում գործած յանցանքը։

Մենք կընդունենք մեզ պարզած ձեռքը. նա շաղախուած է անթիւ թշւառների աղի-արտասուքով, ներկուած մեր եղբայրների, մեր քոյրերի, մեր գաղափարական ընկերների թանկագին, սուրբ արիւնով. բայց մենք կընդունենք։ Եւ բարոյական իրաւունք չունենք մերժելու, երբ ձեռքը այդ մեկնում է անկեղծօրէն, երբ մեկնողը

խոստովանում է իր յանցանքները և ձգտում՝ նրանց քաւելու։

Օսմանեան Ցեղափոխական Կուսակցութիւնը՝ Բուբիկօնը անցել է։ Նրա համարձակ ու վստահ ձայնն արձագանք կը գտնի երկրի զանազան մասերում ցրուած, պատեհ առիթի սպասող, գրգռուած ու վրէժխնդրութեան ծարաւ սրտերում։ Տաճիկ յեղափոխութիւնը կը լայնանայ, և մենք յուսով ենք, որ օսմանցի տարրը, երկար ժամանակ բռնակալութեան ձեռքին խաղալիք դառնալուց յետոյ, այսօր սթափուած՝ աւելի կատաղաբար հարուածներ կը թափի իր արիւնը ծծողի գլխին. մենք յուսով ենք, որ հազարաւոր անմեղների անարատ արիւնով շաղախուած ձեռքը կը մաքրուի և կը մաքրուի անպատճառ. մեծ ու փոքր սուլթանների արեան մէջ թաթախուելով. մենք յուսով ենք վերջապէս, որ այսօր „միևնոյն հողի վրայ մեծցող եղբայրներուն հետ երես երեսի նայել՝ չհամարձակող“ տաճիկ յեղափոխականը իրականապէս իր ազգի յանցանքները քաւելուց յետոյ, պարզ երեսով կը մտնենայ մեզ և արդէն մաքրած ձեռքը մեզ մեկնելով՝ կաշխատի մեզ հետ յանուն բոլոր հայածեալների և կը կուի ընդդէմ ամէն տեսակ կեղեքիչների։

Սպասում ենք, որ Օսմանեան Ցեղափոխական Կուսակցութեան խօսքին շուտով հետևի գործը։

ԴԱԾՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ԽՄԲԻ ԿՈՒԻՐ ԱԽՈՌԿԱՅ ԼԵՌՆԵՐՈՒՄ

—

Մեզ հետ պաշար վերցնելով՝ Վարագից ճանապարհ ընկանք դէպի սահմանագլուխ. երկրորդ օրը՝ լոյս երրորդ գնում էինք դէպի Ախոռիկ։ Այժմ 31 հոգի էինք. քաղաքից մեզ հետ նոր մարդիկ էլ էին միացել. 31 հոգին բաւական շատ էր, բազմաշատ քրդերի դաշտերում զգալի հետքեր թողնելու. իսկ այդ քրդերը, որ շատ հոտառութիւն ունին, իսկոյն և եթ որոշում են ֆէդայիների ոտնատեղերը։ Հնայելով, որ թրջած էինք և ճանապարհը ցեխ էր, մենք անընդհատ և արագ-արագ էինք քայլում, պատճառը ցերեկւայ դիրքի հեռաւորութիւնն էր։ 15 օրւայ տաժանելի ճանապարհը մեզ ուժասպառ էր արած. բայց կարիքը իր պահանջներն ունի և մենք հպատակւում էինք։

Ախոռկայի մօտ, լոյսին 2 ժամ մնացած՝ յանկարծ մեր յառաջախաղ մարդկանց միջից քրդերէն խօսելու ձայներ լսեցինք. ճանապարհը շեղեցինք դէպի աջ, յետոյ կրկին ուղղեցանք. քիչ հեռու կանգնած էր մի քիւրդ. „ով է“, հարցրինք յառաջագնացներից, „ոչինչ, պատասխանեցին նրանք, քիւրդ է. հարցրեց՝ ո՞ւր էք գնում՝, ասացինք „ասկեարներ“ ենք. յետոյ միայն մոտածեցինք, որ այդ պատասխանը խիստ անբաւարար է, այլ պէտք էր ուղղակի բռնել քրդին ու սպանել. ուշ էր. քրդի տուած օգուտն այն եղաւ, որ մենք աւելի արագ սկսեցինք քայլել, այնպէս որ առաւօտու դէմ հազիւ միայն Ախոռկայ սարի տակ էինք, 12 ժամ անընդհատ քայլելուց յետոյ։ Մինչդեռ մենք ճիգ էինք թափում ըստ կարելոյն շուտով բարձրանալ, ուղղեցոյցը յայտնեց, որ այդ տեղերում մեզ սատանան անգամ չի տեսնիլ, որովհետև այնտեղով անցուդարձ քիչ է լինում. ուստի հանգստանալով, դանդաղ քայլերով ելանք սարը, և մտանք մի ահագին անձաւի մէջ, մի քիչ չորացնելու մեր շորերը և քնել. բայց թրջած մարդը կարող է քնել։ Երկու ժամու չափ այդտեղ մնացինք, յետոյ դուրս եկանք և ձորն իջանք, որտեղից էլ պէտք է հանդիպակաց բարձրութիւնն իջնէինք և շրջէինք միւս կողմը. այդ էարինք. շատ էինք յոգնած և նորից անձրև էր սպառնում. նստեցինք ձորում, մինչև անգամ կրակ էլ արինք, փոքր ի շատէ չորացնելու համար մեր դժբախտ շորերը, որոնց միայն թրջուելն էր վնասակար։

Կէսօրից հազիւ մի ժամ անցել էր. զանազան մտածմունքներից յետոյ, որոշեցինք այդ գիշերը շրջակայ լեռներում անցկացնել. մեր դիմաց երկու քարանձաւ էին երևում, 2 հոգի մեզանից գնացին, իսկ մենք շրջապատեցանք խոտի ծղոտներից արած կրակի շուրջը։

„ՀՕ՛յ, հՕ՛յ“—լերան կատարից լսեցինք խառն ի խուռն աղաղակներ. ուշադրութիւնս դարձրինք վերև. ձիաւոր զինուորները սև մրջիւնների նման սփռուել էին մեր դիմացի սարի վրայ։ Նրանց յիմարութիւնը մեզ զարմացրեց. եթէ ուզենային կարող էին առանց իրենց գոռում-գոչիւններով մեզ իմացնելու իրենց գոյութիւնը, յետ դառնալ և միւս կողմից թիկունքից յարձակուելով, ահագին հարուած հասցնել մեզ, որ, հարկաւ, անհոգ նստած կը լինէինք ձորի մէջ։ Բայց երբ տեսանք իրենց, առանց ժամանակ կորցնելու սկսեցինք սարը բարձրանալ, դիրքեր բռնելու համար։ Այդ միջոցին սկսուեց անձրևը. սակայն այդ չէր կարող մեզ արգելք լինել՝ դիրքերնիս շուտով գրաւելու. կէս ժամից յետոյ մենք արդէն լերան վրայ էինք, քարերի յետև 3-4 տեղ դիրք բռնեցինք, միևնոյն ժամանակ հակառակ կողմից բարձրացաւ ձիաւորները և մեր դիմացի քարերում դիրք հաստատեցին։

Սկսուեց կռիւը։ Իսկապէս՝ այս անգամ կռիւ էր, այն ևս սոսկալի կռիւ։ Հրացանները երկու կողմից ևս որոտալով՝ մեզ շրջապատող լերանց բարձունքներն էին դղրդեցնում նրանց թնդիւնները ժայռերին զարկուելով՝ ահարկու արձագանքներով տարածւում էին երկարաձիգ բարձրութիւններում և խզւում անդնդախոր

ձորերի մէջ. այդ ձայները մեր պատերազմական երաժշտութիւնն էին կազմում, և մենք անարգելով կատաղի ցուրտն ու մանրափաթիլ, բքաթառն ձիւնը, որոտացնում էինք մեր հրացանները, միևնոյն ժամանակ սրտագին աղաղակներ հանելով, երբ թշնամի ձիաւորը թամբից գետին էր պարզւում, իր պիղծ արիւնի մէջ խեղդուելով, կամ երբ դիրքի յետևից երևացողի գանգն էր ջարդւում, արիւնախառն ուղեղը քարերի փառաւոր ներկ դարձնելով։ Մենք կռւում էինք, ինչպէս կարող է կռւել բուռն ոգևորութեան մէջ գտնւող հայդուկը, որի աչքում իր կեանքը մաղաչափ նշանակութիւն չունի. ձիւնախառն քամու շվվոցի և հրացանների բոմբիւնների հետ միացած մեր ձայները, մենք երգում էինք, և, կարծես կրկնալի ոյժ ու զօրութիւն ստացած, դիրքից դիրք, քարից քար անցնում, գնդակներ տեղալով հակառակորդների գլխներին . . .

Մութն ընկաւ. կռիւը դադարեց. յաղթութիւնը փառաւոր էր. մերոնցից մի կաթիլ արիւն անգամ չընկաւ, մեր 12-14 հոգի և մէկ միլեռիմ կորցրած թշնամու այրւած սրտերը հովացնելու։

ՎԱՆ

11/23 դեկտեմբեր 96 թ.

—

Ուրախալի երևոյթներ շատ կան։

Մեր վերջին կռիւները զուր չանցան. ժողովուրդը լիովին սթափւեցաւ, մեծ համակրանք կը ցուցնէ դէպի յեղափոխականը և յեղափոխութիւնը։ Ըստ երևոյթին ալ հասկցեր է, որ հայի փրկութիւնը միայն յեղափոխութեամբ կըլլայ։ Ոգևորութեան յայտնի նշաններ կերևան։

Ցունիսին բանտարկւած օրիորդ Զարուհի Տէրոյեան արձակւած է 60 ոսկիի երաշխաւորութեամբ։

Կառավարութիւնը այստեղ ալ հայ պոլիսներ կը գրէ և գայմագամներու մուավիններ կը նշանակէ։

Մօտ ժամանակներս մեր քաղաքը եկան երկու ռուս քննիչներ, ասկէ Բաղէշ անցան, անկէ ո՞ւր գացին՝ յայտնի չէ։

Կառավարութիւնը թոյլ է, բոլորովին խաղաղ տրամադրութեան մէջ, հանդարտութիւն է ամենուրեք։ Նայինք՝ վերջը ինչ կըլլայ . . .

***

Վանայ վերջին հերոսական կռուին մասնակցող մեր ընկեր հայդուկներից մի երկուսը ապահով տեղ են հասցրել իրենց վրայ արձակած թնդանօթի ռումբերից մէկը, իբրև փայլուն յիշատակ այդ անհաւասար կռուի։ Դա կը լինի պերճախօս ապացոյց ոչ այնքան հայդուկների յանդուգն անվեհերութեան, որքան իրենց դէմ դուրս եկած բազմաթիւ զինուորական գնդերի ապշութեան և հարեմական կառավարութեան կատարեալ լքման։

ՆԱՄԱԿ ՊՈԼՍԻՑ

18/30 դեկտեմբեր 96 թ.

—

Վաղուց է, որ կը ջանայի գրել և „Դրօշակ"-ի ընթերցողներուն հետաքրքրութեանը փոքրիկ բաւականութիւն մը տալ, բայց մինչև ցարդ չէր յաջողւեր։

Պոլսոյ քաղաքական շրջաններուն մէջ Բաբելոնեան իրարանցում մը կը տիրէ։ Նելիդով՝ գալէն վերջ քանի մը անգամ պալատ գնաց, կըսեն, որ իբր թէ այս անգամ՝ այնքան անուշ չի խօսիր սուլթանին հետ։ Միայն բան մը ամենքն ալ կը հաստատեն, այն է, որ Ռուսը կուզէ միայն իր ուզած կերպով վերջ տալ Հայկական Սարսափներուն։

Արդէն յայտնի է, որ Տատեան Արթին փաշային ջանքով Օրմանեան պատրիարք եղաւ։ Այդ մարդը այնքան ալ որոշ մարդ մը չէ, թէև կըսւի, որ—իբր ճիզուիտական դպրոցի մէջ ուսած, կրթւած Վարդ մը—բաւական դիպլօմատ է, բայց վերջը տեսնենք։

Այսօր պաշտօնապէս Օրմանեան և Տատեան միջնորդ կը հանդիսանան հայ ժողովրդին և ձեր արիւնը լափող սուլթանին միջև։ Տեսնենք, կրնա՞ն մեզ հաշտեցնել։

Հայ յեղափոխականներուս լաւ ծանօթ նազմ փաշան և անոր օգնականը՝ Հիւսէին պէյ ասպարեզէն իջան. մէկը աքսորի ենթարկւեցաւ, միւսը կըսեն, թէ նահանգապետ է նշանակւած։

Նազմին յաջորդող Շէֆիկ պէյը նորամուծութիւններ կընէ ոստիկանական նախարարութեան մէջ և Նազմի հաւասար եռանդով „Երիտասարդ Թիւրքերուն" համակրողները կը ձերբակալէ։ Այժմ սուլթանը աւելի անհանգիստ է, որովհետև հայ յեղափոխականներու հետ ասպարեզ կուգան և Թիւրքերը։ Ի հարկ է երկու թշնամու հետ կռիւը աւելի դժւար է արդէն ջախջախւած, մոլորւած և հաշիւը կորուցած կառավարութեան մը համար։

Ոստիկանական նոր նախարարը շրջաբերական մը ղրկեց բոլոր պանդոկներու, խաներու տէրերուն, որպէսզի յաճախորդներէն անցագիր պահանջեն ու իրենց քով պահեն և մեկնելու ատեններին միայն, ոստիկանութեան իմաց տալէ յետոյ, անցագիրը տիրոջը դարձնեն։

Կըսւի թէ „Երիտասարդ Թիւրքերու" գործելուն տակտիկան պիտի փոխւի։

Ամիստիայի առիթով հայերը խումբ-խումբ կազատւին։ Նախ անոնց լուսանկարները կը հանեն, ապա պատրիարքի երդմնագրերով երդւեցնելը տալով պատրիարքին քով՝ ազատ կը թողուն։ Ազատուողներուն մէջ կան 5-15 տարով դատապարտեալներ։ Այդ պաշտօնական երդմնագիրը ի միջի այլոց սա հատւածը կը պարունակէ՝ „Հաւատարիմ պիտի մնամ սուլթանին այնպէս. ինչպէս մինչև այժմ եղած եմ"։

Մենք ալ կուխտենք յանուն Ալլահին, յանուն մար-

գարէին և Մեծ-Մարդասպանին արևուն, որ հաւատարիմ պիտի մնանք այնպէս, ինչպէս մինչև այժմ եղեր ենք...

Բանտարկեալներու կրած տանջանքներու մասին հարկ չկայ երկար կանգ առնելու։ Դժոխքը մարդկային լայնկեկ երևակայութեան վերացական ստեղծագործութիւն է, իսկ մեր իրական կեանքը փորձով ցոյց տուաւ, թէ սուլթանի կառավարութիւն ընդունակ է նսեմացնելու այն երեւակայական դժոխքը։ Այս չափը կը բաւէ ձեզի հասկցնելու։

Հիմա սկսած են հայերուն տները գրել. ամեն տան մէջ քանի տղամարդ կայ, ինչով կզբաղին, կարձանագրեն։ Ամեն կերպ կը ջանան հային այնպիսի դրութեան մէջ դնել, որ հասկնան անոնց ամեն մէկ շարժումը։ Առ այժմ Բանկալթիի տները կը գրեն։

Պուլկարիայ գաղթած հայերը կը վերադառնան. որոնք հարց ու փորձի ենթարկուելէ յետոյ իրենց տուները կերթան։

* * *

1/13 յունվար 97 թ.

Նախորդ նամակովս հաղորդեր էի բանտարկեալներու արձակման լուրը։ Բայց բանտը կը մնան դեռ 34 մահուան դատապարտուածներ, 12 անվճիռներ և մէկ քահանայ՝ Աֆիոն-Գարահիսարէն բերուած. պարզ զրպարտութեան զոհ է վերջինս։ Ձենք հասկնար, թէ ինչ կը դառնայ մեր պատրիարքարանի ու նախարարաց շուրջը։ Մէկ կողմէն ընդհանուր ներման իրատէն կարձակէ սուլթանը, միւս կողմէ անվճիռները կը մնան դեռ բանտերը։ Հապա՞ գաւառները։ Երիզայի բանտարկեալները անշարժ կը մնան դեռ զնտաններուն մէջ։ Քանի՞ անգամներ դիմումներ եղան պատրիարքարան. միշտ միևնոյն պատասխանը,—թէ կաշխատինք միւսներուն համար ալ։

Արդեօք ի՞նչ մեկնութիւն տանք նոր ձերբակալութեանց. անցեալները քանի մը արձակուածներ կրկին հարցաքննութեան տարին ու գիշեր մը պահելէն ետքը, պատրիարքարանի միջոցաւ նորէն արձակուեցան։ Նոր աքսորի ձայներ կը լսուին։

Կուզէ՞ք ոստիկանութեան հարցաքննութեան մասին նմոյշներ։ — Պատմեմ համառօտակի։

Առաջին պայման՝ հարցաքննութեան կը տանին միշտ գիշերը, ժամը 4-5-էն վերջը։ Ոստիկանութեան տնօրէնը կսկսի հարցաքննել. նախնական սովորական հարցերէն յետոյ տաճկական պաշտօնեայի յատուկ ժպիտով, կեղծ անուշութեամբ ու շողոքորթութեամբ միայն „սէյլէ՛“ (խօսէ) կըսէ, իբր թէ ամբաստանեալը գիտէ արդէն, թէ ինչ պէտք է խօսիլ։ Եւ մի՛ ապրասցէ, եթէ փոքրիկ համոզում մը գոյացուցեր է իր մէջ, թէ մեղաւորատ ես, կսկսի մէկ-երկու ժամ աղերսել այնպէս՝ որ կարծես մուրացկան լինի. իսկ կը տեսնէ թէ աղերսանքով չկրցաւ բան մը փրշնել, կսկսի հակառակը։ Ցանկարծակի կը բռնկի և կը պոռայ, որ բերեն „թէրճիմանը“ (թարգմանը)։ Խեղճ ամբաստանեալը չի հասկնար, թէ այդ ինչ թէրճիման է. ժամանակ ալ չի մնար մտածելու։ Կը բերեն մեծ փայտ մը և կսկսին սոսկալի ծեծը, համեմած փոզոցային ամենակեղտոտ հայհոյանքներով։ Նախարարին երկրորդը անընդհատ կը ծեծէ ու կը ծեծէ, մինչև որ յոգնի։ Կը նստի, նորէն կը պոռչտայ „սէյլէ՛“։ Մերժողական պատասխանէն յետոյ դարձեալ ծեծ և հայհոյանք։ Այսպէս 2 ժամ տանջելէ յետոյ ոչ մի պատասխան ստանալով՝ բանտ կուղարկեն կրկին։

Երկրորդ գիշերը դարձեալ կը տանին, ու կսկսի միևնոյն յանկերգը „սէյլէ“։ Ձեղա՞ւ.— կը բերեն այս անգամ ուրիշ փայտ մը։ Որոցայ ըսելու, որ իւրաքանչիւր փայտ իր յատուկ անունը ունի։ Առաջին փայտի անունը, ինչպէս ըսի, թէրճիման է։ Երկրորդը „դաշնակցական“ անունը կը կրէ։ Այս անունը հայերէն և թիւրքերէն գրուած է փայտին վրայ։ Այս վերջինը՝ մէջը մեծ մատի հաստութեամբ երկաթ մ՚է, վրան հաստ կարծր կաշի անցուցած, որու միևակ իրեն ծանրութեամբ իջնելը կը բաւէ. հապա՞ վայրենի ուժով որ զարնեն... ծեծի ատեն ոստիկանները դատապարտեալը լաւ մը բռնած, երբ ուրիշ պաշտօնեաներ ու ոստիկանք հանդիսատես են, կսկսին զայն հարուածել ու ծաղրել, ըսելով՝ թէ „ահա՛ ձեր սիրելի դաշնակցականը. ինչո՞ւ կը պոռաք՝ այս ձեր սուրբ հաւատքն էր. ասով կը պարծենայիք՝ թէ դաշնակցական ենք“, և այլն խօսքեր։ Կը զարմանային սակայն, որ ոչ մէկը կուլար։ „Ի՞նչ է այս, կըսէին, չեն ալ լար։ Օ՜ ի՞նչ յամառ էք. եթէ թիւրքի մը ապտակ զարնենք՝ հայրը անգամ կը մատնէ“։

Երրորդը „փայտ կենացն“ է. հաստ ու ծանր փայտ մը է, բազուկի հաստութեամբ. սա ամենասոսկալին է։ Կան նաև զանազան գործիքներ, օրինակ, իրանը մէջքէն վար կախելու, ու այդ դրութեան մէջ սոսկալի կերպով ծեծելու համար. ձեռքերն ալ գելարանի մը տակ կը դնեն և կոլորեն և այլն և այլն, ոնն ըսեմ։ Բանտերուն մէջ ալ պահապաններն են, որոնք սոսկալի ծեծով միւտիրին պակասը կը լրացնեն։ Եւ ասոնք այն ժամանակներն էին, երբ դեսպանները գիշերները ցերեկ ըրած, սուլթանի հետ բարեկարգութեանց ծրագիրներ կը պատրաստէին, ու երբեմն անամոթաբար քննիչներ կուղարկէին բանտերի դրութեանց մասին տեղեկութիւններ առնելու. եկողը անշուշտ թիւրք մ՚էր. կամ ենթադրենք իրենցմէ ըլլայ, միևնոյն բանն է, որովհետև բանտերը հազար ու մի ծակ ու ծուկ, մութ խորշեր, զնտաներ, գետնափոր տեղեր ունին, զորս այցելուին բնաւ չեն ցոյց տար, այլ միայն մաքուր կարծուած „ղովուշները“, սրահները, ուր բոլորը միացած՝ խմբովին բանտարկուած են։ Ի հարկէ, շատերը կը խաբուին ու նպաստաւոր լուրեր կը տանին։

Քանի մը շաբաթ առաջ Լօնտոնի ոստիկանութեան տնօրէնը (որ հոս էր) տեղւոյս բանտերուն այցելութեան եկած էր։ Սա Օսմանեան պանքայի տնօրէն Վինսընդի եղբայրն է։ Այդ մարդը մինակ ղովուշների դռներէն ներս նայելով, բանտի եկեղեցին (սա Ցունաց ժամանակէն մնացած փոքրիկ մատուռ մ՚է, որովհետև այդ կեդրոնական բանտը՝ ժամանակին յունաց հոգեւոր հաստատութիւն մ՚է եղած ուխտաւորներուն յատկացեալ, մէջն ալ փոքրիկ մատուռ մը) այցելելով՝ գոհ սրտով մեկնեցաւ, որ բանտի մէջ կրօնքի ազատութիւն ալ կը տիրէ... Սրատես անգլիացին հիացած մնաց... այնպէս որ, այդ հիացումը թիւրք թերթերուն մէջ արձագանք գտաւ։ Այս թիւրքերը լաւ ուսումնասիրած են եւրոպացիները և գիտեն անոնց հետ վարուելու խորամանկութիւնը կամ անոնց կովութիւնը։

ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

—

Արեւելեան հարցը ռուսական քաղաքականութիւն մը եղած է այժմ:

Ռուսաստանը կապասէր այս օրին. անշուշտ աւելի սեւ օրերու կսպասէ դեռ: Ռուսիոյ ամենազօր կայսրութեան շահը կը պահանջէ, որ Արեւելեան հարցին ոչ ոք խառնուի, զի այդ իր բնական իրաւունքն է: Եւ այսօր այդ արքը իր թաթերուն տակ առած է սուլթանին գլուխը եւ իր ամբողջ կառավարական զօրութիւնը: Երկար ատեն շոյեց խալիֆային մօրուքը, քաշալերեց զայն, ամենանենգաւոր մինչոցներով խաղցուց Եւրոպական տէրութիւնները, մինչեւ որ Թիւրքիան դրաւ այնպիսի ճանճային դրութեան մը մէջ, որ հիւլօյի թըշուառին պէս, քանի շարժի աւելի վար կը խրի:

Նելիտօֆ՝ Թիւրքիայի այդ հար ոգին, երբ մէկ կողմէն կը պընդէր տէրութեանց ներկայացուցիչներուն, որ սուլթանի վրայ ճընշում՝ չի բանեցնեն, այլ ամեն բան անոր բարեհաճ քէյֆին ձգեն, միւս կողմէն մահմետական խալիֆային պատանքը կը կարէր: Երբ սուլթանը՝ աշխարհի առջեւ խաղ խայտառակ եղած, տեսաւ, որ ցարի կառավարութիւնն էր միայն, որ իրեն նենգաւոր ձեռքը կերկընցնէր, կուրօրէն նետեց ինքզինք անոր գիրկը եւ եղաւ ցարի ձորտը

Ռուսիա այնքան առաջ գնաց իր լաբութեանը մէջ, այնքան ուրախ է իր յաջողութեանը մէջ, որ երկու անգամ՝ երկուք հրոսի պէս կը հաւատայ, թէ Տարկաստանի մասին դարերէ ի վեր հազար ու մէկ գուրգուրանքով մնացած երազը կատարելու ժամանակը հասած է: Պատուղը հասեր-է, պէտք է կրկնել: Երբ Փրանսա իր դաշնակիցը եւ սեղանաւորը, առաջարկեց Թիւրքիոյ ելեւմուտքին քարեկարգութեան, նեղացաւ ցարի կառավարութիւնը, որ իր ոսկեզօծ երազները կուզէին խափանել, Թիւրքիոյ հիւանդութեան դարման տանելով՝

Կրսեն՝ թէ Նելիտօֆ՝ Բետրսպուրգի վերջին այցելութեան առեն իր կառավարութեան ներկայացուցչը է Պոլիսը եւ Ասիական եզերքները զինուորապէս զբաւելու յանդուգն ծրագիրը, բայց ելեւմտական վիճակը եւ յախուռն բաղդատիղութեան մը հետեւանքները նկատելով մերժելը է: Այդ առթիւ ցարը լեզուի պոչով մը հրամայեր է իր սիրական դեսպանին, որպէսզի աշխատի սուլթանէն քարեհորոգումներ ձեռք բերել, բայց . . . առանց ճնշումի. այսինքն կարեւորութիւն չի տալ:

Հիմա մէջտեղը մարդ չի կայ. ամեն ինչ Ռուսիոյ քաղաքականութեան առանցքին վրայ կը դառնայ եւ օրուան հերոսներն են Նելիտօֆն ու սուլթանը: Հետեւն ամեն մարդ ապշած կը նայի, այդ հերոսներու քաջագործութեանց վրայ եւ սակայն Սեւ-ծովու թուխպ ալիքներուն վրայէն ռուսական նաւերը դէպի Վոսփոր կը նային:

Երբ Նելիտօֆ ու սուլթանը գլուխ գլխի սակարկութենով զբաղած են, Թիւրքիան կախի զգալ իր անդառնալի կորուստը, կը հայոյէ սուլթանին, որ իր տունը քանդելէն վերջը գնաց, իրմէ աւելի վայրագ կառավարութեան մը ձեռքը ինկաւ: Այդ կը յուսահատեցնէ երկրին ամենէն հեռատես ու սրտացաւ մարդիկը եւ կարծես կսկիծոտ համակերպութեամբ մը կսպասեն ճակատագրական բուպէին:

Թիւրքիոյ գոյութիւնը մազէ կախուած է: Այնքան մարդազոհները յաջողութիւն չի պարգեւեցին խեղճ սուլթանին: Դրամ՝ չի կայ եւ ժողովուրդը բարոյական վնասութեան եւ նիւթական մահանութեան մատնուած է: Այդ ամենափինթի տիպարը խորամանկ բռնակալութեան, որոյ միակ բարոյական զէնքն էր խաբել խաբեբել յայտնապէս կը տեսնէ վերը, ուր դատապարտուած է գլուխէդիմ: Սակայն հաւիտը դեռ քան մը մոռրած է ընել՝ ամբողջ երկիրը իր հետ ու գահավիժել. Նելիտօֆին յայտարարեր է, „եթէ ես խալիֆաներու վերջինը պիտի ըլամ, չեմ դիմեր սակայն երկրորդ խրտիվ՝ ըլլալ“:

„Թայմզ“ կրսէ, փոր ճարելու համար սուլթանը միակ միջոց մը ունի, իր վարչութիւնը բարեկարգել ու ծախքերը նուազցնել: Բայց կը յարէ, տարակուսելի է, որ Ազատիւ-Համիտ կարողանայ այժմ ո եւ է բարեհորոգում՝ ընել վասնզի-իր ձեռքով իր տունը փլցուց:

Նոյն պէս լուր կը շրջի, թէ Թիւրքիոյ կամ՝ լաւ եւս՝ սուլթանի ու Ռուսիոյ միջեւ գաղտնի դաշնադրութիւն մը կայ: Ամեն պարագայի մէջ կենթադրենք՝ թէ այդ դաշնադրութեան ոգին սուլթանի անձին պահպանութիւնն ըլլալու է, ոչ երկրին:

Սակայն գերմանական թերթի մը տարածած մանակնկալ լուրերուն նայելով, որ բաւական ցնցողական է, սուլթանը Նելիտօֆի ծայրայեղ պահանջներէ բռնադատեալ, դիմեր է երկու դեսպանները մինչեւ Ղրիմ, որպէսզի գինքը հաշտեցնեն Սօլզպերիի հետ:

Ահա Ռուսիոյ գաղտագողի կամ՝ յայտնի քաղաքականութիւնը Թիւրքիոյ եւ արեւելեան ինդրոյն նկատմամբ: Ժողովուրդները ջարդել տալ եւ յետոյ տէր կանգնիլ անոնց ժառանգութեան:

Դարուս քաղաքականութեան բարոյականը . . .

Հետաքրքրութեան համար Նելիտօֆի եւ ցարի տեսակցութենէն ալ ապահի դրուագ մը կը հրատարակենք, զոր հաղորդած է մեզի անծանօթ ոգին:

Ցարը. Ի՞նչպէս, Թիւրքիոյ գործերը մեր ուզածին պէս կերթա՞ն:

Նելիտօֆ. Սքանչելի՞, ձեր օրով կը հասնինք մեր իտէալին:

Ցար. Պէտք եղածին պէս չլատեցի՞ր Թիւրքիան:

Նելիտօֆ. Ոչ կողմը չթողուցի: Սուլթանը այնպէս մը լարած եմ՝, որ անվրէպ կործանում կը դիմէ: Զեռքիս մէջ է Թիւրքիոյ հոգին. մեզի կը մնայ կազմ ու պատրաստ կենալ:

Ցար. Հայերն ի՞նչ եղան:

Նելիտօֆ. Հայերը բաւական քարոյական ու նիւթական ոյժ մ՚էին երկրին մէջ, չանչնչեալ տի նոյն իսկ սուլթանին ձեռքով: Թիւրքիան այսօր գերօ է, հայերուն կոտորածը մեր ապագայ տեսակէտով աւ լաւ է:

Ցար. Ըրէ, ինչ որ կը նպաստէ իմ կայսրութեանս մեծութեան, խաբէ, շոյէ, կոտորել տուր եւայլն,

Նելիտօֆ. Պէտք է խաղցնել Եւրոպական դաշինքները, հակառակիլ ո եւ է բարեկարգութեան, ճնշում՝ չի բանեցնել սուլթանին վրայ եւ պաշտպանել, որովհետեւ այս սուլթանէն աւելի կործանարար փատիշահ չենք կարող գտնել: Բախտը բերաւ:

Բարեսիրտ թագուհին, որ ներկայ էր այդ ողբերգական խօսակցութեան, յանկարծ մինչատեց.--Արդեօք կարելի չէ՞, ըսաւ, մեղմ ձայնով մը, հայաստանի թշուառացած որբերն ու այրիներն ալ կոտորել տալ, քանի որ անտէր, անօգնական են: Կազատին այս աշխարհի տառապանքներէն ու ժարդկութեան խղճին վրայ քիր չեն ըլար:

Նելիտօֆ քարացած. ջերով պատասխանեց.--Ատոր աւ ժամանակը կուգայ:

Ցարը կուզէր ժպտիլ, բայց ժպիտը սառեցաւ իր դէմքին վրայ, երբ յանկարծ դիմացը երեւցաւ սա խօսքը „Հոռոմ աւ իր վերջին օրը տեսաւ“:

* * *

Ցաւալի է անշուշտ տեսնել, որ անազգին պետութիւն մը յիմար սուլթանի մը ապիկար ձեռքերուն մէջ խաղալիք եղած կը տարապտի մահուան ջուածգութեան մէջ: Ցեղէ մը ձեռնտուութեան յոյս չի կայ: Թիւրքերը՝ դարաւոր ստրկութեան տակ բթացած մոռեր են իրենց դժնդակ վիճակը ըմբռնելու: Կարծես ամեն քան յանձնած են Դ ա տ է ր ի ն: Մոռայլ է ապագան, հարցերը խոր արմատներ նետած է երկրին մէջ: Հաւաքական կամքի ուժով միայն թերեւս կարելի է սոսկալի վտանգին առաջքն առնել:

Դաման փորձառութիւնը ու երկրին ողբալի վիճակը ստեղծեց ուր ուրեմն թիւրք երիտասարդութեան մէջ գործնական յեղափոխական կազմակերպութիւն մը: Հայկական ռումբերէն յետոյ՝ թրքական ռումբն է, որ պիտի պայթի Մեծ-Մարդասպանի գլխուն: Ցեղափոխութեան փիլիսոփայութիւնը ռումբին կը յանգի. Ոճրագործ խալիֆան կամ՝ պէտք է ինքնասպանակութեամբ վերջ տայ իր արիւնարբու գոյութեան, կամ՝ պէտք է փողոցի ժողովրդին վրէժխնդրութեան տապարին տակ: Ուրիշ ճար չի կայ:

Ճշմարիտ կատակ-ողբերգութիւն մ՚է Թիւրքիոյ կացութիւնը: Դեսպանները դիմում՝ կընեն Դրան Կրետէի մասին խոստումները կատարել եւ ժողովրդին պահանջներուն գոհացում տալ, սուլթանը մէյմէկ գանձէ կը խմցնէ անոնց ու կը ճամբէ. սպասնալիքներ կընեն, ինքն ալ կապասնայ հալածական ժողովրդին եւայլն, եւայլն: Այսպէս, մինչեւ որ երկու կողմէն մէկը ճարձրանայ: Բայց ինչպէս

կերեւի դեսպանները սկսած են բ ո ւ ս ո ւ լ ա ն ի ն կրծմնցնել սուլթանի զօրեղ կամքին առջեւ։ Դժբախտաբար նրկիրը իր վերապետին հաստատակամութիւնը չունի, խաղացքը կը ջնջէ, կը տանի։

Հիմա իբր թէ այդ արիւնոտ հողին վրայ բարենորոգումներ պիտի սկսին գործադրուիլ։--թէեւ բարենորոգում անունը կայ, ինք չի կայ, եւ . . . այս սուլթանին ձեռքով։ Անհասկանալի է, թէ ապահիւ ձեռքը կարող է միանգամայն շինել։

Մարաշի զնդապետ Մազհար պէյի դատական խնդիրաւորութիւնը բաւ է ցուցնելու համար, թէ սուլթանը ոչքան բարոյական արժէք կուտայ դեսպաններու պահանջին։ Մազհար պէյ, որ սպանիչն էր Հայր Սալվատորի, անպարտ արձակուեցաւ զինուորական ատենին կողմէ, թէեւ կրնեն, որ նորէն դատի պիտի կանչուի Գամալոնի պահանջման վրայ։

Հանօթոին սկսանչը խօսի։ շաբաթներ առաջ Քրանսական խորհրդարանին մէջ մեծ-մեծ կը ջարդէր իր ազգին առջեւ, թէ ոճրագործ պէյը խստիւ պիտի պատժուի, որովհետեւ . . . Հանօթօի բոպէական ներշնչումը այնպէս կը թելադրէր . . .

Իսկ Պոլիս սուլթանին ոյս երեսը տեսնելու եկած երկու չոկատ քիւրդերը, իրենց առատաձեռն վճռապետէն 9000 ոսկի պարգեւ ստանալով վերադարձան իրենց շահատակութեան վայրը։ Կրսեն՝ թէ գանձը պարապ է, երբ մատնիչներ, դաւաճաններ, մարդասպաններ վարձատրելու գայ կարգը, համիսոլ շուտով կը գտնէ։ Բարդղիմէոս պէյին ալ, անոր տեղապահութեանը համար 4000 դահեկան ամսական յատկացուցած է . . . նաժիշտներ պահելու համար։

Սուլթանը իր ահռելի ոճիրները վարագուրելու համար, ընդհանուր ներում շնորհեց հայ քանտարկեալներուն։ Բայց ինչպէս հոսմի „Ոսմա թերթը“ կրսէ, անգութ հեգնութիւն մը այդ ներումը, որ աւելի կոտրածին մատնակցող թիւրքերուն օգտին է քան հայոց։

Եւ արդէն քանի՞ փող կարժէ այդ Մեծ-Մարդասպանին ներումը։ անբարոյական մարդու մը գործին կարելի՞ է բարոյական արժէք տալ։ Անմեղները ձերբակալել, յետոյ ի ծայն փողոց կայսերական ներում շնորհել . . . քիչ մը մոռնալ կուտայ մեզի։

Սուլթանը վարձքի կսպասէ՞ արդեօք իր . . . վճռանոթութեան փոխարէն . . .

Այն խնդիրները, որոնք բանտերու դժոխային ամեն տանջանքները կրելէ յետոյ կազատուին, սուլթանի հակահրամանով բանի զաւառները կուղարկուին։ Արդէն դեսպանները զգացուցած են փաստիշահին, թէ այդ ընթացքը ընդհանուր ներման ոգուն հակառակ է։

Ինչպէս կերեւի պատրիարք եւ Արթին փաշա լաւ գործիք դարձած են Եըլդզին։ Մեզի համար Արթին փաշա կամ պատրիարք նշանակութիւն չունին իսկապէս, ինչպէս մինչեւ հիմա ալ չեն ունեցած։

Այդ փաշան արիւնաբաղձ ժողովրդէն իր վճռապետին համար շնորհակալութեան ուղերձ կրգրելու տեղ, թող հանգնէ անոր՝ թէ վայրենութիւն է անմեղ ժողովուրդ մը խողխողել տալ, թէ զազանները զառաջնորդելու միայն արժանի են։

Հայի հացը, հայի փողը
Մինչեւ ե՞րբ սուլթանն ուտէ
Եւ գարշելի պերճ ըներանով
Հայ անունը անարգէ։

Արթին փաշան տղայական-սահմանադրական խաղերով ազգը թող չի խաղցնէ։ Մեր ուշադրութիւնը դեսպաններուն չի նմանիր։

Իսկ պատրիարքը գերմանական թերթի մը թղթակցին հետ շինելով կրսէ՝ հայերը սուլթանէն գոհ են, հանգիստ կամքին՝ թէ յեղափոխականները ազգին համքին հակառակ կը գործեն եւայլն։ Պատրիարքը, որչափ գիտենք, մեռած եւ բնազանցական զաղափարներով պլլանուած մարդ մ՚է, ի հարկին շողոքորթ, ի հարկին համակերպող, բայց ոչ բնաւ ամենուն բնութեան տէր, եւ ոչ ալ հաստատ ուղղութեան մը հետեւող։

Մենք կը կարծենք՝ թէ պատրիարքական իշխանութիւնը երբէք իրաւունք չի տար մէկուն այդքան յախուռն ըլլալ եւ ազգի մը նուիրական զգացումը, ինչպէս յեղափոխութիւնը, սիրաբաղձել, երբ այդ ազգը նոյն իսկ իր ծնողաշունչ աւերակներուն վրայ անվնասն եւ յուսալից կը մնայ։ Ազգը երկնրես պատրիարքներէ փորը կուշտ է։

- Վանքի հաւ ուտողներուն վրայ, չենք գիտեր, ո՞ւրան յոյս կարելի՞ է դնել։

ԿՐԵՏԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Կրետէի խնդիրը մինչեւ այսօր Հայկական հարցի նման սպասում է իր վերջնական լուծման։ Ճիշտ է, թէեւ սուլթանը եւ Եւրոպական մեծ պետութիւններն արդէն մի որոշ համաձայնութեան եկած են այդ խնդրի նկատմամբ եւ նա արդէն վճռած եւ Աբդիւլ-Համիդի իրադէով կնքած էր դեռ սրանից 5-6 ամիս առաջ, բայց չէ՞ որ այդ բոլորը . . . միմիայն թղթի վրայ էր։

Կրետէին խոստացած բէֆորմներից գրեթէ դեռ ոչ մէկը չէ իրագործուած. ո՛չ մի հիմնական փոփոխութիւն չէ մտցրուած կղզու կառավարչական մարմնում մէջ՝ չնայած այն փայլուն խոստումներին, որ տալիս եւ հաստատում էր սուլթանը Կրետական ապստամբութեանը վերջ դնելու համար։

Կրետացիք բողոքեցին մի քանի անգամ բէֆորմների ձգձգելու դէմ։ Բայց անօգուտ։ Դիպլոմատիայի գործելու տակտիկան սուլթանի վերաբերմամբ վաղուց է յայտնի։ Փոխանակ դիմելու աւելի գործնական միջոցների՝ ոյժի, միակ բանը, որի բարերար ազդեցութեան տակ սուլթանը անմիջապէս կիրագործէ իր խոստացածի նոյն իսկ կրկնապատիկը, դիպլոմատիան դրա փոխանակ բաւականանում է Բ. Դրան գրաւոր պահանջներ ուղարկելով. Բ. Դուռն էլ „այսօր-էգուց“ գցելով կամ երկդիմի պատասխաններով յետաձգում է բէֆորմները։

Բայց ո՛չ. վերջին հեռագիրները հաղորդում են , որ Կրետական ժանդարմերիայի հարցը լուծելու վրայ է։

Այդ նշանաւոր բէֆորմի հարցը երկար ժամանակ ձգձգուում էր։ Եւրոպական պետութիւնները պահանջում էին, որ յիշեալ ժանդարմերիայի մէջ պիտի մտնեն եւ զինուորական կրթութիւն ստացած այլազգիներ. բայց սուլթանը մերժում էր՝ յայտարարելով, որ նա ամիսողջապէս պիտի բաղկացած լինի մահմեդականներից։ Դեսպանները անյողդող պնդում էին իրենց առաջարկութեան վրայ։ Մենք սպասում էինք, որ դեսպանները այս անգամ յաղթող կը հանդիսանան. բայց ո՛չ։ Այսօրուայ հեռագիրը հաղորդում է, որ այդ խնդիրը վճռեցաւ, բայց աւելի յօգուտ սուլթանի։ Այնպէս որ ժանդարմերիան պիտի բաղկացած լինի բացառապէս մահմեդականներից, բաց առնելով մի քանի օտարահպատակ սպաներ, որոնք պիտի ընդունեն միմիայն առժամանակեայ կերպով։ Սարը երկունքի մէջ էր եւ . . . մուկ ծնեց։

Իսկ թէ ե՞րբ եւ ի՞նչպէս, ի՞նչ ձեւով, ի՞նչ կերպ պիտի իրագործեն Կրետական բէֆորմների միւս յօդուածները, այդ էլ Ալլահն է խաբար։

Ահա թէ ի՞նչ արժէք, ի՞նչ գին ունեն Աբդուլի իրադէն, խոստումները՝ թո՛ղ իսկ կնքուած եւ հաստատուած մեծ պետութիւնների ներկայացուցիչների ստորագրութեամբ։

Եւ այսպէս, իրերի դրութիւնը Կրետէ կղզում այժմ նոյնն է, ինչ որ ապստամբութիւնից առաջ էր. նա մազաչափ անգամ չէ փոխուած։

Սպանութիւններ, յարձակումներ տաճիկների կողմից պակաս չեն։ Ամիս 3-ին, ինչպէս հեռագրում են Աթենքից „Դեյլի Նիւզ“-ին, մահմեդականները՝ դարան մտնելով Կրետէի մայրաքաղաք Կանէի մօտ, մի քանի անգամ հրացան են արձակում քրիստոնեաների վրայ. որանից յետոյ տեղի է ունենում մի ընդհարում. սպանուում 2 տաճիկ եւ 1 քրիստոնեայ։ Նոյնանման դէպքեր պատահում են կղզու եւ այլ կէտերում։

Կանէում մեծ յուզում է տիրում։

Ընդհանուր անբաւականութիւնը դնալով օրի օրի վրայ սաստկանում, աճում է։

Կրետացիք՝ խաբուած սուլթանից եւ մանաւանդ Եւրոպական դիպլոմատիայից, լարկութեամբ եւ վրէժխնդրութեամբ վառուած, լեցուած, վճռել են կրկին զէնքի դիմել. պատրաստութիւններ են տեսնւում։ Յեղափոխական Կոմիտէն արդէն յայտնել է Իտալիայի կամաւորներին՝ կազմ ու պատրաստ լինել եւ ապստամբութիւնը պայթելուն պէս Կրետէ անցնել։

Վերջին տեղեկութիւններին նայելով՝ ապստամբութիւնը կարող է բռնկուել այսօր կամ վաղը։

Ահա մի նոր սարսափ սուլթանի համար։

Հայաստան եւ Կրետէ, ներկայ րոպէիս միայն այս երկուսն չեն, որ սարսափեցնում են Եըլդըզ Քիօսքի հրէշ բանտարկեալին. ապստամբական ձայներ են լսւում, փոքրիկ ընդհարումներ են տեղի ունենում եւ Մակեդոնիայում։

Ճայթում, ճռճռում, փլւում է ամեն կողմից Հիւանդ Մարդու խարխուլ կայսրութիւնը։ Մի հարուած, մի հարուած եւս . . . ամեն բան վերջացած կը լինի։

ՕՍՄԱՆԵԱՆ ԲԱՆԿԸ ՏԻՐՈՂ ՀԵՐՈՍՆԵՐԸ

—

Ցաւոնի է, որ բանկը տիրող հերոսները Մարսէյլ բերուեցան։ Ֆրանսիական ֆանթօշ կառավարութիւնը, հակառակ Եւրոպական պետութեանց ներկայացուցիչների տուած պաշտօնական խոստման, մեր ընկերներին բանտը դրեց։ Հերոսները բանտից բաղձալին, ֆրանսիական մամուլի լաւագոյն մասը կատաղի յարձակուեց կառավարութեան վրայ եւ վերջինս ստիպուած եղաւ տղաներին հանել բանտից, միայն Ֆրանսիայից բոլորովին աքսորուելու պայմանաւ։

Կառավարութիւնը իր այս որոշումը կատարեց ամենասմարդի կերպով՝ նախ յանկարծակի երկու պարագլուխներին՝ Գարօին եւ Հիրային Ժընէվ ուղարկից, իսկ մնացած 15 հոգուն փոխանակ Հիւսիսային Ամերիկա ուղարկելու, ինչպէս խոստացել էր, բռնի կերպով քշեց Բուէնէս-Այրէս (Արգենտինեան հասարակապետութիւն Հարաւային Ամերիկայում)։ Այդպիսով հայրենիքի սիրուն ամեն բան զոհող եւ կրկին զոհուելու պատրաստ հերոսները եւրոպական „մեծ“ ազգի փոքրոգի կառավարութեան խաբեբայութեամբ ընկան այնպիսի մի երկիր, որը մեզնից հեռու է հազարաւոր մղոններով եւ ուր կարող էին բոլորովին անխնամ մնալ ու հայրենիքի կարօտից հալուել ու մաշուել։

Բայց այսօր, ի մեծ ցաւ Սուլթանի եւ նրա բարեկամ „մեծ հասարակապետութեան“ կարող ենք հրճուանքով աւետել, որ Բուէնէս-Այրէս աքսորուած մեր ընկերներն արդէն Լօնդոն են գտնւում, բոլորովին հանդիստ ու ապահով դրութեան մէջ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

—Վերջին ժամանակներս Պոլսոյ դեսպանները կրկնապատկուած եռանդով են աշխատում։ Պատրաստում են բէֆորմների նոր ծրագիր Հայաստանի համար։ Թէ ինչ տեսակ բէֆորմներ են, դեռ ոչ ոք գիտէ. դեսպանները խիստ գաղտնի են պահում։ Գաղտնապահութիւնը այն աստիճանին են հասցրել, որ Աւստրիական դեսպանատան մօտ, ուր տեղի են ունենում այդ խորհուրդները եւ վէճերը դուռ ու պատուհան փակ, նոյն իսկ կառապաններին արգելած է կանգնել։

„Թայմզի“ հեռագիրներին նայելով՝ այժմ դեսպանները ժողովում են շաբաթը չորս հինգ անգամ։ Նրանք կարծում են, որ ծրագիրը պատրաստ կը լինի փետրուարի սկիզբներին։

—Պոլսից հեռագրում են „Տանի“-ին, որ ոստիկանութիւնը փնտրում է Օսմանեան բանկի վրայ յարձակման ձեռնարկի երկու հեղինակներին, որոնք իբր թէ վերադարձել են Պոլիս։

ՆԻՒՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Բ. Ք-ի Դաշնակցական ուսանողական խմբից ստացուած է 125 ֆր.

Տապար Ք-ի Կեդրոն. անդուկի մէջ ստացուած են.

Գաղթավայրից-Խնձորիկից՝ Մտածող 20 ռուբլի, Մէլքօվ 10 ռուբ., Համբարձում 25 ռուբ., Էլմաս 40 ռուբ., Հէյվա 20 ռուբ., Նաւ 6 ռուբ.

Գահիրէի կոմիտէի անդուկի մէջ ստացուած են.

Պերճ խուրք 80 ղրշ. ոսկի, Սուրէնեան խումբ 65 ղրշ. Գ. Երէկէն 10 ղրշ., Շ. 5 ղրշ., Բ. 5 ղրշ. Սագօ 10 ղրշ., Միրիճեան 1 անգղ. ոսկի, Մէկը 5 ղրշ. Փարհատ 5 ղրշ։

Բոլիս. Վարնայի կոմիտէի անդուկի մէջ ստացուած են.

Արսէնից 10 ֆր., Աշոտից 5 ֆր 10 սենթ., Արտաշից 2 ֆր., Արայից 3 ֆր., Ադվարդից 2 ֆր., Արամից 2 ֆր.

Պոլսպատ խմբից 18 ֆր. 55 սանտ., Օր. Տ-ից 10 ֆր., Թորգոմեան խմբից 9 ֆր., Կայծիկ 11 ֆր., Ներ. Թաղիմից 5 ֆր. 10 սանտ., Կամաւորուց 50 ֆր., Վիրապներից 5 ֆր. 10 սանտ., Վ. Խաչատուրեան խիզանցուց 2 ֆր., Նոյից 1 ֆր.

Սուլինայի Դաշնակցական խմբից Սարգսեանի միջոցով 20 ֆր.

Սլիւնէի „Օժանդակ“ կոմիտէի միջոցով ստացուեց Բէրմենի կայարանի հայ եղբայրներից 20 ֆր., Շրբուն կայարանի հայ եղբայրներից 40 ֆր.

Թատնէ Մահլէ 20 ֆր.

Վ ր ի պ ա կ։ — „Դրօշակ“-ի այս տարուայ առաջին համարի մէջ տպուած է՝ Փիլիպպօպոլի կոմիտէի անդուկի մէջ ստացուած է 225 լեվ 20 ս.

Պէտք է լինէր՝ Փիլիպպօպոլի անդուկի մէջ ստացուած է Թաթար-Բազարջիկէն 225 լեվ 20 ս.

Խմբագրութեան դիմել հետեւեալ հասցէով՝
Rédaction du **Droschak**, Genève (Suisse)